

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵ  
ՆԱԽԱԳԱՀ

Հ Ր Ա Մ Ա Ն

« \_\_\_\_ » \_\_\_\_\_ 2021 թ

N \_\_\_\_\_ -Ն

**ՀՀՇՆ 31-03.03- «ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՇԵՆՔԵՐ» ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ  
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001 ԹՎԱԿԱՆԻ  
ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հիմք ընդունելով «Քաղաքաշինության մասին» ՀՀ օրենքի 10.1-րդ հոդվածի 3-րդ մասի 5-րդ և 5.1-րդ կետերը, 16-րդ հոդվածը, «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 4-րդ մասի 3-րդ կետը և 6-րդ մասի 1-ին կետը, 33-րդ հոդվածի 3-րդ մասը

**ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝**

1. Հաստատել ՀՀՇՆ 31-03.03- «Վարչական և կենցաղային շենքեր» շինարարական նորմերը՝ համաձայն հավելվածի:
2. Ուժը կորցրած ճանաչել՝  
Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի «Նորմատիվատեխնիկական ակտերի կանոնակարգման մասին» N 82 հրամանով սահմանված ցանկի «ՍՆԻՊ 2.09.04-87. «Ադմինիստրատիվ և կենցաղային շենքեր » պարբերությունը:
3. Սույն հրամանի պահանջները չեն տարածվում մինչև սույն հրամանն ուժի մեջ մտնելն սկսված և դեռևս չավարտված քաղաքաշինական ծրագրերի (նախագծային և շինարարական) գնման գործընթացների, ինչպես նաև կնքված և գործող պայմանագրերի վրա:
4. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՂՈՒԼԱՐՅԱՆ

Հավելված  
Հաստատված է  
ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի  
20 \_ թվականի \_\_\_\_\_ -ի  
N \_\_\_\_-Ն հրամանով

**«ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՇԵՆՔԵՐ»  
ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐ**

Գործարկման թվականը

**ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ**

1.	ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ .....	
2.	ՆՈՐՄԱՏԻՎ ՀՂՈՒՄՆԵՐ .....	
3.	ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ .....	
4.	ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .....	
5.	<b>ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ .....</b>	
	5.1. Ընդհանուր դրույթներ .....	
	5.2. Շենքերի հուսալիության և կայունության ապահովման պահանջները .....	
	5.3. Հրդեհների դեպքում շենքերի անվտանգության պահանջները	
	5.4. Շենքերի շահագործման ընթացքում մարդկանց առողջության պահպանման ապահովման պահանջները .....	
	5.4.1. Անվտանգություն շենքի շահագործման գործընթացում .....	
	5.4.2. Տեղամասի և տարածքի նկատմամբ պահանջները .....	
	5.4.3. Վարչական շենքեր և շինություններ .....	
	5.4.4. Կենցաղային շենքեր և շինություններ .....	
	5.5. Ինժեներական համակարգեր և սարքավորումներ .....	
	5.6. Մատչելիությունը բնակչության սակավաշարժ խմբերի համար .....	
	5.7. Շրջակա միջավայրի պաշտպանություն .....	
6.	<b>ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՌԱՑԻՈՆԱԼ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ .....</b>	

	6.1. Էներգասպառման կրճատման պահանջներ .....	
	6.2. Բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործում .....	
	<b>Հավելված Ա</b> (պարտադիր): Ցանկ վարչական և կենցաղային շենքերի սենքերի, որոնց տեղադրումը թույլատրվում է նկուղային և որմնախարսխային հարկերում .....	

## 1. ԿԻՐԱՌՄԱՆ ՈԼՈՐՏԸ

1. «Վարչական և կենցաղային շենքեր» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը սահմանում են վարչական և կենցաղային շենքերի տեղադրմանը, շենքերի տակ գտնվող և սպասարկման համար անհրաժեշտ հողատարածքին, շենքային համալիրներին, բարեկարգմանը, սենքերի կազմին և մակերեսներին, ծավալահատակագծային և կոնստրուկտիվ լուծումներին, լուսավորվածությանը, ինժեներական կահավորանքին, ինչպես նաև շենքերի ներքին միջավայրի կազմակերպմանը ներկայացվող հիմնական պահանջները:

2. Սույն փաստաթղթի նպատակն է ապահովել վարչական և կենցաղային շենքերի անվտանգությունը դրանց կենսական ցիկլերի բոլոր փուլերում՝ մարդկանց կյանքի, առողջության, գույքի և շրջակա միջավայրի պահպանության, բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործման, էներգախնայողության, ինչպես նաև աշխատանքային գործընթացի համար հարմարավետ պայմանների ստեղծումը:

3. Շինարարական նորմերը պարտադիր են արտադրական օբյեկտների վարչական և կենցաղային շենքերի նախագծման, նախագծերի փորձաքննության, շինարարության և շահագործման վերահսկողության դեպքում: «Վարչական և կենցաղային շենքեր» Հայաստանի Հանրապետության շինարարական նորմերը պարունակում են.

- ա) նորմատիվ պահանջների նպատակը,
- բ) գործառնական պահանջները,
- գ) աշխատանքային բնութագրերին ներկայացվող պահանջները:

4. Վարչական նշանակության հասարակական շենքերի (հիմնարկների և կազմակերպությունների համար նախատեսված շենքերի և սենքերի), այդ թվում առավելապես մտավոր աշխատանքի համար նախատեսված, բնակելի շենքերում ներկառուցված, ներկառուցված-կցակառուցված սենքերի նախագծման դեպքում պետք է լրացուցիչ առաջնորդվել Հայաստանի Հանրապետության տարածքում գործող համապատասխան նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջներով:

## 2. ՆՈՐՄԱՏԻՎ ՀՂՈՒՄՆԵՐ

5. Սույն նորմերում օգտագործվել են հղումներ հետևյալ նորմատիվ փաստաթղթերին.

1)	ՀՀԿՀ 23-101-2017	«Բնակչության սակավաշարժ խմբերի և հաշմանդամություն ունեցող անձանց համար շենքերի և շինությունների մատչելիության ապահովման
----	------------------	---

		նախագծման կանոնների հավաքածու»
2)	ՀՀՇՆ 22-03-2017	«Արհեստական և բնական լուսավորում» շինարարական նորմեր
3)	ՀՀՇՆ 21-01-2014	«Շենքերի և շինությունների հրդեհային անվտանգություն» շինարարական նորմեր
4)	ՀՀՇՆ 30-01-2014	«Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմեր
5)	ՀՀՇՆ 31-03-2018	«Հասարակական շենքեր և շինություններ» շինարարական նորմեր
6)	ՀՀՇՆ 31-01-2014	«Բնակելի շենքեր. Մաս 1. Բազմաբնակարան բնակելի շենքեր» շինարարական նորմեր
7)	ՀՀՇՆ 40-01.01-2014	«Շենքերի ներքին ջրամատակարարում և ջրահեռացում» շինարարական նորմեր
8)	ՀՀՇՆ IV-12.02.01-04	«Ջեռուցում, օդափոխում և օդի լավորակում» շինարարական նորմեր
9)	ՀՀՇՆ IV-12.03.01-2004	«Գազաբաշխիչ համակարգեր» շինարարական նորմեր
10)	ՀՀՇՆ 24-01-2016	«Շենքերի ջերմային պաշտպանություն» շինարարական նորմեր
11)	N2-III-4.2-01-2003	«Հանրային սննդի կազմակերպություններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» սանիտարական կանոններ և հիգիենիկ նորմեր, հաստատված ՀՀ առողջապահության նախարարի 02.05.2003թ. N 302 հրամանով
12)	N 2.2-002-05	«Աշխատանքի հիգիենիկ դասակարգումը ըստ արտադրական միջավայրի վնասակար և վտանգավոր գործոնների, աշխատանքային գործընթացի ծանրության և լարվածության ցուցանիշների» սանիտարական կանոններ և նորմեր, հաստատված ՀՀ առողջապահության նախարարի 2005 թ. օգոստոսի 15-ի N756-Ն հրամանով
13)		Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թ. ապրիլի 16-ի «Հայաստանի Հանրապետությունում ահաբեկչության դեմ պայքարի ազգային ռազմավարությունը հաստատելու մասին» ՆԿ-51-Ն կարգադրություն
14)		Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. նոյեմբերի 22-ի «Հայաստանի Հանրապետությունում ահաբեկչության դեմ պայքարի ազգային ռազմավարության դրույթների իրականացումն ապահովող միջոցառումների ծրագիր-ժամանակացույցը հաստատելու մասին» N 1473 –Ա որոշում

15)	SԿ	Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. նոյեմբերի 23-ի N1933-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգ
16)	SԿ	Հայաստանի Հանրապետության կառավարության 2007թ. հուլիսի 12-ի N961-Ն որոշմամբ հաստատված Էլեկտրական էներգիայի հաղորդաբաշխման վերաբերյալ տեխնիկական կանոնակարգ
17)	SԿ	Հայաստանի Հանրապետության կառավարության 2006թ. նոյեմբերի 23-ի N1939-Ն որոշմամբ հաստատված «Սպառողների էլեկտրատեղակայանքների տեխնիկական շահագործման կանոններ» տեխնիկական կանոնակարգ
18)	SԿ	Հայաստանի Հանրապետության կառավարության 2018թ. ապրիլի 12-ի N 426-Ն որոշմամբ հաստատված նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության տեխնիկական կանոնակարգ

**Ծանոթագրություն:** Սույն շինարարական նորմերից օգտվելիս նպատակահարմար է ստուգել «Հայաստանի Հանրապետության տարածքում գործող քաղաքաշինության բնագավառի նորմատիվատեխնիկական փաստաթղթերի ցանկ» տեղեկագրի հղման փաստաթղթերի գործողությունը, որը կազմվում է յուրաքանչյուր տարի ընթացիկ տարվա դրությամբ: Եթե հղման փաստաթուղթը փոխարինվել (փոփոխվել) է, ապա սույն նորմերից օգտվելիս պետք է առաջնորդվել փոխարինված (փոփոխված) փաստաթղթով: Եթե հղման փաստաթուղթը չեղյալ է հայտարարվել առանց փոխարինման, ապա այն դրույթը, որում հղում է տրված դրան, կիրառվում է այն մասով, որին չի վերաբերվում հղումը:

### **3. ՏԵՐՄԻՆՆԵՐ ԵՎ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ**

**6.** Սույն նորմերում կիրառվում են հետևյալ տերմինները՝ համապատասխան սահմանումներով.

1) **արտադրական օբյեկտ՝** արդյունաբերական ու գյուղատնտեսական արտադրությունների տեղակայման և դրանց մեջ տեխնոլոգիական սարքավորումների շահագործման համար անհրաժեշտ պայմաններ ապահովող շենքերը, շինությունները,

2) **ինհալատորիա՝** հատուկ սարքավորված շինություն, որը նախատեսված է ինհալացիոն թերապիայի համար,

3) **վլացքատուն՝** սենք, որտեղ մաքրելու նպատակով կատարվում է կեղտոտ սպիտակեղենի և հագուստի վլացում, մշակում և հարդարում,

4) **կիսացնցուղ՝** բարձր ջերմային ճառագայթման պայմաններում աշխատողների համար հովացման սարք, իրենից ներկայացնում է սառը ջրի միացմամբ լողախցիկ,

5) **կենցաղային շենքեր՝** կառույցներ, որոնք նախատեսված են աշխատողների սպասարկման սենքեր տեղաբաշխելու համար. սանիտարա-կենցաղային, առողջապահության, հասարակական սննդի, առևտրի, կենցաղճառայությունների և մշակույթի,

6) **հանդերձարան՝** սենք կամ դրա մի մասը, որն ամբողջությամբ նախատեսված է հագուստի, կոշիկի, աքսեսուարների պահպանման համար:

7) **մանսարդ՝** ձեռնահարկի տարածության մեջ տեղադրվող օգտագործելի հարկ, որը ձևավորվում է մանսարդային տանիքով տան վերջին հարկում,

8) **ներդիր, ներկառույց՝** շենքի մաս, որը նախատեսված է վարչական և կենցաղային շինությունների տեղակայման համար, գտնվում է արտադրական շենքի ամբողջ բարձրության և լայնության սահմաններում (ներդիր), դրա բարձրության կամ լայնության մի մասում (ներկառույց), առանձնացված է հակահրդեհային արգելքներով, ինժեներական սարքավորումների տեղադրման հնարավորությամբ (մասնակիորեն),

9) **սենք՝** պատող կոնստրուկցիաներով սահմանափակված շենքի ներքին տարածք, որը ծառայում է տարբեր գործառույթների,

10) **տոգորանյութ՝** որևէ իր կամ առարկա տոգորելու հատուկ բաղադրությամբ նյութ՝ որոշակի ազդեցության նկատմամբ առարկայի կայունությունը բարձրացնելու նպատակով,

11) **վարչական շենքեր՝** կառույցներ, որոնք ընդհանուր ճարտարապետական առաջադրանքով միավորված են պետական, տնտեսական կազմակերպությունների և հիմնարկների, ինչպես նաև արտադրական օբյեկտների կառավարչական ապարատի աշխատանքի միջավայր ստեղծելու համար:

12) **հեռակապի կենտրոն (քուլ կենտրոն)՝** ճայնային կապուղիներով դիմումների մշակմամբ և տեղեկացմամբ զբաղվող մասնագիտացված կազմակերպություն կամ կազմակերպությունում առանձնացված ստորաբաժանում,

13) **Ֆոտարիում՝** բուժական և կանխարգելիչ նպատակներով ուլտրամանուշակագույն ճառագայթներով խմբակային ճառագայթում իրականացնելու համար լուսաբուժական կաբինետ:

#### 4. ԳՈՐԾԱՌԱԿԱՆ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ

7. Վարչական և կենցաղային շենքերը պետք է պայմաններ ստեղծեն.

ա) ղեկավար և կառավարչական անձնակազմի լիարժեք աշխատանքի համար,

բ) անձնակազմի կենցաղային պահանջների բավարարման, աշխատանքային գործընթացի բացասական հետևանքների վերացման, վնասակար արտադրական գործընթացների ազդեցության հետևանքով առաջացած բացասական ազդեցությունների վերացման կանխարգելիչ միջոցառումների անցկացման համար,

գ) բոլոր տեսակի ձեռնարկությունների սանիտարակենցաղային, բժշկական սպասարկման, հանրային սննդի ծառայությունների համար:

8. Վարչական և կենցաղային շենքերը, դրանց հիմքերը և կրող կառուցվածքները պետք է դիմանան ենթադրյալ ծանրաբեռնվածությունների և

ազդեցությունների համադրությանը, որոնց դրանք կարող են ենթարկվել նախագծային ժամկետի ընթացքում շինարարության, վերակառուցման կամ շահագործման ժամանակ:

**9.** Վարչական և կենցաղային շենքերը պետք է նախագծվեն և կառուցվեն այնպես, որպեսզի ապահովվի հրդեհի առաջացման վտանգը կանխելու կամ նվազեցնելու հնարավորությունը դրա շահագործման ընթացքում, իսկ հրդեհի առաջացման դեպքում ապահովվի աշխատողների, գույքի և շրջակա միջավայրի պաշտպանությունը հրդեհի վտանգավոր գործոնների ազդեցությունից և (կամ) այդ գործոնների ազդեցության սահմանափակումը:

**10.** Շենքերի ծավալա-հատակագծային և կառուցվածքային լուծումները, տարահանման ուղիների մակերևույթների հարդարումը, ինչպես նաև ինժեներական ապահովման ներքին համակարգերի տարրերը պետք է սահմանափակեն հրդեհի և դրա վտանգավոր գործոնները տարածման հնարավորությունը հրդեհի օջախի սահմաններից դուրս:

**11.** Վարչական և կենցաղային շենքերն ու դրանց տարրերը պետք է պահպանեն կառուցվածքների հրակայունությունը մարդկանց (այդ թվում տեղաշարժման սահմանափակ ֆիզիկական հնարավորություններով) անվտանգ գոտի տարահանման ժամանակ, ինչպես նաև փրկարարների և այցելուների փրկության ժամանակ, որոնց ժամանակին տարահանումը հնարավոր չէր:

**12.** Վարչական և կենցաղային շենքերը, դրանց ներքին միջավայրը մարդկանց գտնվելու դեպքում չպետք է ֆիզիկական, քիմիական, կենսաբանական և այլ վնասակար գործոնների անթույլատրելի ազդեցություն ցուցաբերեն աշխատողների և այցելուների վրա: Տարածքների կառուցապատումը պետք է բարենպաստ պայմաններ ստեղծի այնտեղ գտնվող մարդկանց համար՝ հաշվի առնելով շրջակա միջավայրի վրա ազդեցությունը:

**13.** Շենքերը և դրանց տարրերը, ինժեներական ապահովման համակարգերը պետք է սենյակներում ապահովեն բարենպաստ միկրոկլիմա, ներառյալ օդի ջերմաստիճանը, խոնավությունը և շարժման արագությունը, ինչպես նաև պատերի ներքին մակերևույթների ջերմաստիճանի, պատնեշող կոնստրուկցիաների ջերմակայունությունը և հատակների մակերևույթի ջերմայության պահանջները:

**14.** Շենքի տարրերը և շենքում առկա պայմանները չպետք է թույլ տան մթնոլորտային խոնավության արտահոսք շինությունների մեջ, խոնավության գոյացում, իսկ ջրամատակարարման համակարգերը և ջրագծի ներքին համակարգերը՝ արտահոսքեր և աղտոտումներ: Կոյուղու համակարգերն ու ցանցերը պետք է ապահովեն հեղուկ արտահոսքերի հեռացումը՝ առանց դրանց ջրամատակարարման համակարգերի մեջ ընկնելու, առանց հողի և շրջակա միջավայրի աղտոտման:

**15.** Շենքերի շինությունների ձայնամեկուսացումը, արհեստական լուսավորությունը և բնական ինսոլյացիան պետք է այնտեղ գտնվող մարդու առողջության համար ապահովեն անվնաս պայմաններ:

**16.** Շենքերն իրենց կենսական ցիկլի ընթացքում չպետք է ունենան բացասական ազդեցություն շրջակա միջավայրի վրա:

**17.** Վարչական և կենցաղային շենքերում, ինչպես նաև դրանց տարածքում մարդկանց (այդ թվում տեղաշարժման սահմանափակ հնարավորություններով) ուղիները պետք է լինեն հարմար և անվտանգ՝ հաշվի առնելով սանդուղքների,

բացվածքների, թեք և ողորկ մակերևույթների առկայությունը և մակարդակների նիշերի տարբերությունը:

**18.** Վարչական և կենցաղային շենքերն ու դրանց պատնեշող շինարարական կառուցվածքները, ջեռուցման և հովացման, օդափոխության և օդորակման, ինչպես նաև լուսավորության համակարգերը պետք է գործեն էներգախնայողության և ջերմության պահպանման ռեժիմով:

**19.** Վարչական-կենցաղային շենքերում պետք է ապահովել բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը շինարարական կառուցվածքների, նյութերի և պատրաստվածքների աշխատունակության պահպանմամբ՝ շենքի ծառայության հաշվարկային ժամկետին համապատասխան, արտադրության թափոնների և շինարարական նյութերի ու կոնստրուկցիաների պատրաստման համար երկրորդական նյութերի առավելագույն օգտագործմամբ, քանդման դեպքում շինարարական կոնստրուկցիաների երկրորդային օգտագործմամբ և շինանյութերի արտադրության համար շինարարական ջարդոնի վերամշակմամբ:

**20.** Վարչական և կենցաղային շենքերի նախագծման փուլում անհրաժեշտ է հստակեցնել օբյեկտի պատկանելությունը ահաբեկչական առումով Հայաստանի Հանրապետության խոցելի օբյեկտների ցանկին և միջոցներ ձեռնարկել Հայաստանի Հանրապետության իրավական ակտերով հաստատված ահաբեկչական առումով խոցելի օբյեկտների հակաահաբեկչական պաշտպանության համակարգի պահանջներին համապատասխան օբյեկտի հակաահաբեկչական պաշտպանության համապատասխան համակարգի կառուցման համար (Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թ. ապրիլի 16-ի ՆԿ-51-Ն կարգադրության, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. նոյեմբերի 22-ի N 1473 –Ա որոշում):

## **5. ԱՇԽԱՏԱՆՔԱՅԻՆ ԲՆՈՒԹԱԳՐԵՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՑՎՈՂ ՊԱՀԱՆՋՆԵՐԸ**

### **5.1. Ընդհանուր դրույթներ**

**21.** Շենքերի ճարտարապետական լուծումները պետք է ընդունել հաշվի առնելով շինարարության շրջանի քաղաքաշինական, լանդշաֆտային, կլիմայական պայմանները:

**22.** Վարչական և կենցաղային շենքերը պետք է կառուցել շենքերի և շինությունների, շինանյութերի և արտադրանքի անվտանգության նկատմամբ տեխնիկական կանոնակարգի պահանջներին, սույն նորմերով և նախագծման ու շինարարության նկատմամբ պահանջներ սահմանող այլ նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերին համապատասխան:

**23.** Շենքերի նախագծման և կառուցման ժամանակ պետք է ապահովվի դրանց հասանելիությունը այդ շենքերում աշխատող կամ այցելող բնակչության սակավաշարժ խմբերի համար՝ համաձայն ՀՀԿՀ 23-101-2017 պահանջների:

**24.** Շինությունների հիմնական խմբերը (այցելուների համար, վարչական, պահեստային, ծառայողական-կենցաղային) պետք է տեղավորել իրենց գործառական նշանակությանը և միմյանց միջև տեխնոլոգիական կապերին համապատասխան:

**25.** Շինարարական և մոնտաժային կազմակերպությունների վարչական և կենցաղային շինությունները թույլատրվում է տեղադրել շարժական շենքերում:



Թույլատրվում է այդ նպատակների համար օգտագործել կառուցվող օբյեկտների քանդման ենթակա շենքերը, այդ թվում բնակելի:

**26.** Շենքի ընդհանուր մակերեսը պետք է սահմանել որպես իր բոլոր հարկերի (վերգետնյա, նկուղային, տեխնիկական, գետնախարսխային և մանսարդային) մակերեսների հանրագումար: Վերգետնյա, նկուղային, տեխնիկական և գետնախարսխային հարկերի մակերեսը պետք է չափել արտաքին պատերի ներքին մակերևույթների սահմաններում հատակի մակարդակով:

**27.** Մանսարդային հարկի մակերեսը պետք է սահմանել որպես արտաքին պատերի ներքին մակերևույթների սահմաններում հատակի մակարդակով չափվող մանսարդային շինության օգտագործվող և չօգտագործված մակերեսների հանրագումար:

**28.** Բնակելի տանը ներկառուցված և ներկառուցված-կցակառուցված ձեռնարկությունների համար, իրենց համեմատաբար փոքր տարողունակության և առավել պարզ տեխնոլոգիական գործընթացների պատճառով, թույլատրվում է մի շարք գործառույթներ համատեղումը մեկ սենքում:

**29.** Մարդկային հոսքերի կարգավորումը պետք է ապահովի մարդկանց զանգվածային տեղաշարժը աշխատանքային հերթափոխի մեկնարկից առաջ և ավարտից հետո, ինչպես նաև ընդմիջման ժամանակ՝ տարբեր սենքերի միջև հարմար հաղորդակցություն ապահովելու համար:

**30.** Վերելակները պետք է ապահովեն մարդկանց և բեռների անվտանգ և հարմարավետ տեղաշարժը շենքերում :

**31.** Շենքերի հարկայնությունը սահմանվում է քաղաքաշինական, տեխնոլոգիական և հակահրդեհային պահանջներով:

**32.** Վարչական և կենցաղային շենքերում բնական լուսավորությունը պետք է նախագծել ՀՀՇՆ 22-03-2017 պահանջներին համապատասխան:

## **5.2. Շենքերի հուսալիության և կայունության ապահովման պահանջները**

**33.** Շենքի կրող կառուցվածքները պետք է պահպանեն իրենց հատկությունները ծառայության ենթադրվող ժամկետի ընթացքում:

**34.** Հավաքովի տարրերի կցովի միացումները և շերտավոր կառուցվածքները պետք է հաշվարկվեն ջերմաստիճանա-խոնավային ձևախախտումների և հիմքերի անհավասար նստվածքի և այլ շահագործական ազդեցությունների դեպքում առաջացող ուժերի դիմակայման վրա: Կցատեղի մեջ օգտագործվող խտացնող և հերմետիկացնող նյութերը պետք է պահպանեն առաձգական և կաշուն հատկությունները բացասական ջերմաստիճանի և խոնավության ազդեցության դեպքում, ինչպես նաև դիմացկուն լինեն ուլտրամանուշակագույն ճառագայթների նկատմամբ: Հերմետիկացնող նյութերը իրենց համակցման տեղերում պետք է համատեղելի լինեն կառուցվածքների պաշտպանիչ և պաշտպանիչ-դեկորատիվ ծածկույթի նյութերի հետ:

**35.** Վարչական և կենցաղային շենքերի անհրաժեշտ երկարակեցությունն ապահովելու համար դրանց նախագծման ժամանակ պետք է հաշվի առնել.

- ա) շահագործման պայմաններն ըստ նշանակության,
- բ) շրջակա միջավայրի հաշվարկային ազդեցությունը,

գ) կիրառվող նյութերի հատկությունները, միջավայրի բացասական ազդեցությունից դրանց պաշտպանելու հնարավոր միջոցները, ինչպես նաև դրանց հատկությունների դեգրադացիայի հնարավորությունը:

**36.** Շենքի հիմքերը և կրող կառուցվածքները պետք է նախագծվեն և կառուցվեն այնպես, որ դրա կառուցման ընթացքում և շահագործման հաշվարկային պայմաններում բացառվեն շենքի շահագործումը դադարեցնելու անհրաժեշտությանը հանգեցնող կառուցվածքների ավերման կամ վնասման, ինչպես նաև ձևափոխությունների կամ ճաքերի առաջացման հետևանքով կառուցվածքների կամ ամբողջ շենքի շահագործման հատկությունների անթույլատրելի վատթարացման հնարավորությունը:

**37.** Անհրաժեշտ է պահպանել կրող կառույցների հավասարամուր տարրերի պահանջը, այդ թվում չպետք է թույլ տալ թույլ հանգույցներ և տարրեր, որոնց կրողունակության վաղաժամ սպառումը կարող է հանգեցնել կառույցի քայքայմանը մինչև դրա կրողունակության սպառումը:

**38.** Սեյսմիկ ազդեցությունների, գրունտի լրամշակման, նստվածքների և այլ տեղաշարժերի, ներառյալ սառնամանիքից փքված, ենթակա բարդ երկրաբանական պայմաններ ունեցող շրջաններում շենքերի շինարարության դեպքում ինժեներական հաղորդակցությունների ներանցումները պետք է կատարվեն հաշվի առնելով հիմնատակի հնարավոր դեֆորմացիաների դիմագրավման փոխհատուցման անհրաժեշտությունը՝ տարբեր ինժեներական ցանցերի նորմատիվ փաստաթղթերում սահմանված պահանջներին համապատասխան:

### **5.3. Հրդեհների դեպքում շենքերի անվտանգության պահանջները**

**39.** Շենքերի դասակարգումն ըստ գործառական հրդեհային վտանգի դասերի, շինությունների կատեգորիաներն ըստ պայթյունավտանգ և հրդեհային վտանգի և շինարարական կոնստրուկցիաների հրակայունության սահմաններն որոշվում են համապատասխան ՀՀՇՆ 21-01-2014 պահանջներին:

**40.** Շենքերի միջև նվազագույն հեռավորությունը պետք է ընդունել համապատասխան ՀՀՇՆ 30-01-2014 պահանջներին:

**41.** Հրշեջ ավտոմեքենաների մուտքերը պետք է նախատեսել շենքերից ելքերի, հրշեջ ստորաբաժանումների համար վերելակներ տանող մուտքերի մոտ՝ համապատասխան ՀՀՇՆ 21-01-2014 պահանջներին:

**42.** Մարդկանց մեծ կուտակման վայրերում կիրառվող բոլոր նյութերը պետք է լինեն հրակայուն կամ հատուկ մշակված: Նյութերը պետք է բավարարեն ՀՀՇՆ 21-01-2014 պահանջներին:

**43.** Հրդեհային անվտանգության ապահովման նպատակով շենքի յուրաքանչյուր հարկից, այդ թվում նկուղից, պետք է նախատեսել տարհանման ելքեր, որոնց քանակը պետք է որոշվի տարհանման հաշվարկային ժամանակով և հաշվի առնելով ելքի արգելափակման հավանականությունը:

**44.** Մարդկանց տարհանման հիմնական ուղիների համար պետք է օգտագործել ամենօրյա շահագործվող անցուղիները, միջանցքները և նախասրահները: Տարհանման լրացուցիչ (հատուկ) ուղիներ թույլատրվում է նախատեսել դրանց անհրաժեշտության հիմնավորման դեպքում:

45. Տարհանման ուղիների անցուղիների, միջանցքների և այլ հորիզոնական տեղամասերի լայնությունը պետք է սահմանվի ըստ տարհանվողների թվի՝ ապահովելով առավելագույն թողունակություն ամենամեծաքանակ հերթափոխում, այդ թվում սակավ շարժունակ աշխատողների համար:

46. Աստիճանավանդակների, արտաքին ելքերի (բացի զուգարաններից, վրացարաններից, ցնցուղարաններից, ծխարաններից) միջև գտնվող միջանցքի երկայնքով առավել հեռավոր սենքի դռնից մինչև մոտակա ելքը դեպի աստիճանավանդակ կամ դեպի դուրս պետք է համապատասխանի ՀՀՇՆ 21-01-2014 պահանջներին:

47. Տարհանման աստիճանավանդակների միջև թույլատրելի հեռավորությունը գերազանցելու դեպքում ներդիրներում և ներկառուցվածքներում անհրաժեշտ է նախատեսել չծխացող աստիճանավանդակներ:

48. Արտադրական շենքերում տեղակայված անտրեստիներում և հարթակներում ներկառուցված շինություններից դեպի արտադրական շինություններ ելքերը թույլատրվում է նախատեսել բաց սանդուղքներով:

49. Հրդեհակայունության աստիճանը, շենքերի թույլատրելի բարձրությունը և հրշեջ բաժանմունքի սահմաններում հարկի մակերեսը, շենքի կրող կառուցվածքների հրակայունության սահմանների նկատմամբ լրացուցիչ պահանջները պետք է ընդունել ՀՀՇՆ 21-01-2014 պահանջներին համապատասխան:

50. Ավտոմատ հրդեհաշիջում և հրշեջ ազդարարում (ներառյալ հրդեհի ժամանակ ազդարարման համակարգերը) պետք է նախատեսել շենքերի, շինությունների և կառույցների ավտոմատ հրդեհաշիջման և ավտոմատ հրդեհային ահազանգման համակարգերի սարքավորման, հրդեհի ժամանակ մարդկանց տարհանման ազդարարման և կառավարման վերաբերյալ ՀՀՇՆ 21-01-2014 պահանջներին:

51. Հրշեջ վերելակների սարքավորմանը, ինչպես նաև դրանց հրդեհային անվտանգությանը ներկայացվող պահանջները սահմանվում են ՀՀՇՆ 21-01-2014 շինարարական նորմերով:

52. Բարձրահարկ շենքերի հրշեջ բաժանմունքներում պետք է լինեն հրշեջ վերելակներ :

53. Միջանցքների և տարբեր անցումների լայնությունները չպետք է նեղանան տարհանման ուղիներում:

54. Արտակարգ իրավիճակների ժամանակ շենքում գտնվող մարդկանց տարհանման համար պետք է հասանելի լինեն աշխատավայրից մի քանի ելքեր, որոնք պետք է լինեն միմյանցից այնպիսի հեռավորության վրա, որպեսզի ելքի կրակով կամ ծխով արգելափակման դեպքում աշխատակիցները կարողանան տարհանվել պահեստայինի օգնությամբ:

55. Բոլոր պահեստային ելքերն ու երթուղիները պետք է ունենա համապատասխան արհեստական լուսավորություն:

56. Մեխանիկական օդափոխության ցանկացած համակարգ պետք է մշակվի այնպես, որ հրդեհի դեպքում երաշխավորի խողովակների համակարգի միջոցով հրդեհի և ծխի անանցանելիությունը մնացած տարածքներ: Յուրաքանչյուր տարհանման սանդուղք պետք է ունենա առանձին օդափոխության համակարգ:

57. Կախված շենքերի դասակարգումից (հրդեհային վտանգի դասերից), շինությունների կատեգորիաներից (պայթյունավտանգ, հրդեհավտանգ), ինչպես նաև շինարարական կոնստրուկցիաների հրակայունությունից, տարածքում նախատեսել հրշեջ հիդրանտի տեղադրում:

#### **5.4. Շահագործման ընթացքում մարդկանց առողջության պահպանման ապահովման պահանջները**

##### **5.4.1. Անվտանգություն շենքի շահագործման ընթացքում**

58. Վարչական և կենցաղային շենքերն անհրաժեշտ է նախագծել, կառուցել և սարքավորել հաշվի առնելով այն միջոցառումները, որոնք նախագրուշացնում են շենքի ներսում, տարածքում տեղաշարժվելիս աշխատողների վնասվածքների առաջացման վտանգը, ինչպես նաև դրա տարրերից և ինժեներական սարքավորումներից օգտվելու ժամանակ:

59. Շենքերի նախագծման ժամանակ պետք է նախատեսվի հակահարկելչական պաշտպանության համակարգ՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան իրավական ակտերով սահմանված պահանջներին համապատասխան (Հայաստանի Հանրապետության Նախագահի 2012 թ. ապրիլի 16-ի ՆԿ-51-Ն կարգադրության, Հայաստանի Հանրապետության կառավարության 2012թ. նոյեմբերի 22-ի N 1473 –Ա որոշում):

60. Սեյսմիկ շրջաններում կառուցվող վարչական և կենցաղային շենքերում ինժեներական սարքավորումները և սարքերը պետք է ապահով կերպով ամրացվեն:

61. Անվտանգության ապահովման նպատակով վարչական շենքերում թույլատրվում է նախատեսել պահպանության ստորաբաժանման սենյակ ազդանշան փոխանցող արտակարգ կանչի կոճակներ կամ հերթապահ ոստիկանության վահանակ:

62. Կենցաղային սենքերում վտանգավոր առարկաների առկայությունը պետք է նշվի առավելագույն տեսանելի վայրում տեղադրված նշանների կամ հաղորդագրությունների միջոցով:

63. Շենքի տարրերի կառուցվածքային լուծումները (ներառյալ դատարկությունների գտնվելու տեղը, կառուցվածքի միջով խողովակաշարերի անցման տեղերի հերմետիզացման եղանակները, օդափոխման բացվածքների սարքավորումը, ջերմամեկուսացման տեղադրումը և այլն) պետք է ապահովեն պաշտպանություն կրժողների ներթափանցումից:

##### **5.4.2. Տեղամասի և տարածքի նկատմամբ պահանջները**

64. Շենքերի նախագծման, ինչպես նաև տարածքի գոտիավորման ժամանակ պետք է.

- ա) հաշվի առնել տեղամասի սահմանների պահպանումը,
- բ) հաշվի առնել բնական ռեսուրսների պահպանումը և պաշտպանությունը, ինչպես նաև ենթակառուցվածքների, էներգիայի և ջրի ծախսերի նվազեցումը,
- գ) հաշվի առնել մարդու կյանքի և առողջության, ինչպես նաև հարակից տեղամասերի սեփականատերերի անվտանգության ապահովման միջոցների պահպանումը,

դ) նախատեսել հետիոտնային երթուղիների, հեծանվային և ավտոմոբիլային անցումների անվտանգ տեղակայումը,

ե) ստեղծել երթուղիները հիմնական ճանապարհի հետ միավորող, շենքին մոտեցնող ճանապարհներ,

զ) տեղամասի կանաչապատումը մշակել այնպես, որ ծառերը չարգելափակեն անցումները, հետիոտնային արահետների երթուղիները,

է) տեղադրել լուսավորման սարքեր:

**65.** Հիմնական անցումները դեպի շենք պետք է տեղադրել հիմնական մուտքերի կողմից: Մուտքերը կարող են ձևավորվել պլաստիկ, գունային լուծումներով, գունային, լուսային գովազդով, տառային խորհրդանիշներով և այլն:

**66.** Մուտքը դեպի տեղամաս պետք է սարքավորել օբյեկտի մասին տեղեկատվության տարրերով: Տեղամասի տարածքի մուտքերը պետք է լինեն լավ լուսավորված:

**67.** Առանձին տեղակայվող այն կենցաղային շենքերը, որոնք ներառում են կենցաղային սպասարկման առավել խոշոր ձեռնարկություններ, հրապարակներում և գլխավոր քաղաքային մայրուղիներում տեղաբաշխելիս պետք է նպաստեն քաղաքային կառուցապատման ճարտարապետա-գեղարվեստական կերպարի ձևավորմանը:

**68.** Համալիրների նախագծման և կառուցման դեպքում պետք է նախատեսել պաշտպանական կառույց (կառույցներ)՝ մարդկանց անհրաժեշտության դեպքում պատասպարելու նպատակով:

**69.** Շենքի տեղադիրքը չպետք է խոչընդոտներ ստեղծի այլ շենքերի հասանելի լինելու համար:

**70.** Շենքի տարածքում կամ հարակից տարածքում անհրաժեշտ է նախատեսել ավտոկայանատեղի:

**71.** Հետիոտնային արահետների երթուղին պետք է կապի ավտոկայանատեղին շենքի մուտքի հետ: Անհրաժեշտ է ապահովել եզրաքարերի տեղադրումը, ներկել հետիոտնային անցումները և տեղադրել բոլոր կողմնորոշիչ նշանները:

### **5.4.3. Վարչական շենքեր և սենքեր**

**72.** Վարչական շենքերում պետք է ստեղծվեն այնտեղ աշխատելու և գտնվելու համար հարմարավետ և անվտանգ պայմաններ:

**73.** Վարչական շենքերում սենքերի հիմնական գործառական խմբերը, կազմակերպության առանձնասենյակների ու վարչական անձնակազմի ընդունարանների մակերեսները, կառուցվածքային ստորաբաժանումների աշխատասենյակների մակերեսը, սպասասրահների մակերեսները պետք է նախատեսել համաձայն ՀՀՇՆ 31-03-2018 շինարարական նորմերի պահանջների:

**74.** Վարչական շենքերի ընդհանուր, օգտակար և հաշվարկային մակերեսների, շինարարական ծավալի, կառուցապատման մակերեսի և հարկայնության հաշվարկի կանոնները պետք է ընդունել համաձայն ՀՀՇՆ 31-03-2018 շինարարական նորմերի պահանջների:

**75.** Կառավարման ծառայությունների և նախագծային բյուրոների սենքերի մակերեսը պետք է ընդունել հետևյալ հաշվարկով՝ 4մ<sup>2</sup> կառավարչական մեկ աշխատողի, 6մ<sup>2</sup> նախագծային բյուրոյի մեկ աշխատողի համար, աշխատող

հաշմանդամություն ունեցող անձանց և թիկնաթոռ-սայլակ օգտագործողների համար՝ համապատասխանաբար 5.65 և 7.65մ<sup>2</sup>:

**76.** Ղեկավարների առանձնասենյակների մակերեսը կարող է կազմել աշխատանքային տարածքների ընդհանուր մակերեսի մինչև 15% -ը:

**77.** Ձեռնարկությունների ղեկավարների և նրանց տեղակալների առանձնասենյակներին կից պետք է նախատեսվեն ընդունարաններ և բանակցությունների սենյակներ: Թույլատրվում է կազմակերպել մեկ ընդունարան երկու առանձնասենյակի համար: Ընդունարանի տարածքը պետք է լինի 9 մ<sup>2</sup>-ից ոչ պակաս:

**78.** Վարչական շենքերում կարող են տեղակայվել կառավարման և ծառայությունների, նախագծային գրասենյակների սենքեր, տեղեկատվական-տեխնիկական նշանակության սենքեր, աշխատանքի պաշտպանության և հրդեհային անվտանգության կաբինետներ, ինչպես նաև ուսումնական պարապմունքների համար նախատեսված սենքեր:

**79.** Արտադրական և այլ հիմնարկների հետ նույն տարածքում վարչական շենքերի նախագծման դեպքում անհրաժեշտ է անցումներից բացի ապահովել շենքերի հետիոտնային հասանելիությունը:

**80.** 250 մարդ և ավել թվաքանակով ինժեներա-տեխնիկական անձնակազմի դեպքում համագործարանային կառավարման շենքերում պետք է նախատեսել խորհրդակցությունների համակցված դահլիճներ՝ հաշվարկված աշխատողների 30 տոկոսի համար և բանակցությունների սենյակներ՝ յուրաքանչյուր տեղի համար 4,5 մ<sup>2</sup> հաշվարկով՝ այնտեղ սելեկտորային խորհրդակցություններ անցկացնելու հնարավորությամբ:

**81.** Կառավարման խորհրդակցությունների դահլիճների մակերեսը պետք է ընդունել դահլիճում յուրաքանչյուր տեղի համար 0.9մ<sup>2</sup> հաշվարկով: Խորհրդակցությունների դահլիճներին կից թույլատրվում է նախատեսել հետնասրահ՝ դահլիճի յուրաքանչյուր տեղի համար 0.3մ<sup>2</sup> հաշվարկով: Խորհրդակցությունների դահլիճին կից հետնասրահի մակերեսը պետք է ներառի խորհրդակցությունների դահլիճին հարող միջանցքի մակերեսը: Թիկնաթոռ-սայլակից օգտվող աշխատող հաշմանդամություն ունեցող անձանց առկայության դեպքում խորհրդակցությունների դահլիճում նրանց համար պետք է նախատեսվեն տեղեր՝ մեկ տեղի համար 1.65մ<sup>2</sup> հաշվարկով:

**82.** Խորհրդակցությունների դահլիճին և բանակցությունների սենյակներին կից մինչև 30 մ հեռավորության վրա պետք է նախատեսել զուգարաններ:

**83.** Տեխնիկական գրադարանի սենքերի կազմը և մակերեսը պետք է ընդունել ըստ աղյուսակ 1 -ի:

**Աղյուսակ 1**

<b>Սենքը</b>	<b>Չափման միավոր</b>	<b>Մակերեսը մեկ միավորի համար, մ<sup>2</sup></b>
Ընթերցասրահ	1 տեղ	2,7
Գրքերի, աուդիո և վիդեո տեղեկատվության պահուստարան	1000 պահպանական միավոր	2,5
Ծառայողական սենք	1 աշխատանքային	4

Գրքերի ընդունման և բաշխման, աուդիո և վիդեո տեղեկատվության սեղան	տեղ 1 աշխատանքային	5
Կատալոգի և նոր մուտքերի ցուցահանդեսի տեղ	տեղ 1000 պահպանական միավոր	0,6

**84.** 90 մ<sup>2</sup>-ից ոչ ավելի մակերես ունեցող տեխնիկական գրադարանները պետք է տեղակայել մեկ սենքում:

**85.** Արխիվի սենքերի կազմը և մակերեսը պետք է ընդունել ըստ աղյուսակ 2-ի:

**Աղյուսակ 2**

Սենքը	Մակերեսը մեկ տեղի համար, մ <sup>2</sup>
Ընթերցասրահ	2,7
Աշխատանքային սենք	4
<b>Ծանոթագրություն:</b> Պահուստարանի մակերեսը որոշվում է ըստ նախագծային առաջադրանքի:	

**86.** 54 մ<sup>2</sup>-ից ոչ ավելի մակերեսով արխիվները պետք է տեղաբաշխել մեկ սենքում:

**87.** Արտադրական-դիսպետչերական բյուրոյի սենքի մակերեսը պետք է ընդունել մեկ աշխատատեղի համար 4,5 մ<sup>2</sup> հաշվարկով:

**88.** Աշխատանքի պաշտպանության կաբինետների մակերեսը (մ<sup>2</sup>), որոշվում է ըստ ձեռնարկության աշխատողների ցուցակային թվի (մարդ)։

**Աղյուսակ 3**

Մինչև 1000	24
1000-ից ավել մինչև 3000	48
3000-ից ավել մինչև 5000	72
5000-ից ավել մինչև 10000	100
10000-ից ավել մինչև 20000	150
20000-ից ավել	200
<b>Ծանոթագրություն:</b> Շարժական շենքերի համար թույլատրվում է նախատեսել աշխատանքի պաշտպանության կաբինետներ, որոնց մակերեսը սահմանվում է 0.5 գործակցով:	

**89.** Ուսումնական պարապմունքների համար նախատեսված սենքերի կազմը և մակերեսը սահմանվում են ըստ նախագծային առաջադրանքի:

**90.** Վարչական սենքեր նախագծելիս պետք է նախատեսել սենքերի հատակագծումների փոփոխման հնարավորություն, միևնույն ժամանակ տարածքի

ցանկացած կետի համար թողնելով էլեկտրատեխնիկական հաղորդակցուղիների մոտեցումներ:

**91.** Այն սենքերը, որտեղ նախատեսվում է համակարգչային սարքավորումների տեղադրում, ճաշարանների, ժողովների, խորհրդակցությունների դահլիճները և այլ դահլիճային սենյակներն անհրաժեշտ է տեղադրել հարկերով:

**92.** Ղեկավարների, նրանց տեղակալների, ինչպես նաև այն մասնագետների աշխատատեղերը, որոնց պարտականությունները կապված են գաղտնի տեղեկույթի հետ, անհրաժեշտ է նախատեսել առանձին սենքերում:

**93.** Կոնֆերանս դահլիճը պետք է գործի որպես աշխատանքային նիստերի, խորհրդակցությունների, գործարար հանդիպումների, մամուլի ասուլիսների, բիզնես շնորհանդեսների անցկացման վայր: Կոնֆերանս դահլիճը պետք է հնարավորություն ունենա փակ ռեժիմով և ընդլայնված կազմով միջոցառումներ անցկացնելու համար (տնօրենների խորհուրդ, բաժնետերերի ժողով, ղեկավարների և թուփ-մենեջերների ժողով, մամուլի հետ շփում):

**94.** Հեռակապի կենտրոնները պետք է օժտված լինեն տեղեկույթի մշակման և բաշխման հետ կապված մեծ թվով գործառույթների կատարման հնարավորությամբ:

**95.** Վարչական շենքերի տեղակայումը չպետք է խոչընդոտի յուրաքանչյուր արտադրական օբյեկտի և ձեռնարկության ընդլայնմանը:

**96.** Արտադրական օբյեկտների նկատմամբ վարչական սենքերը և դրանց համալիրները կարող են լինել ներկառուցված, կից կամ առանձին կանգնած :

**97.** Առանձին կանգնած վարչական շենքերը, որտեղ տեղակայված են ամենօրյա սպասարկման տարածքներ, պետք է կապված լինեն արտադրական շենքերի հետ ջեռուցվող անցումներով: Թույլատրվում է չջեռուցվող անցումներ կատարել տաք մեղմ կլիմայով շրջաններում և այն դեպքում, երբ մեկ վարչա-կենցաղային շենքում սպասարկվում են մի քանի ցրված արտադրական օբյեկտներում աշխատողներ: Միևնույն ժամանակ պարտադիր պայման է հանդիսանում յուրաքանչյուր շենքում տաք հագուստ պահելու տեղերի առկայությունը:

#### **5.4.4. Կենցաղային շենքեր և սենքեր**

**98.** Ձեռնարկությունների կենցաղային շենքերում պետք է նախատեսել սենքեր աշխատողների սպասարկման համար, մասնավորապես.

- ա) սանիտարահիգիենիկ,
- բ) կենցաղային,
- գ) առողջապահական,
- դ) հասարակական սննդի:

**99.** Լվացքատների, քիմիական մաքրման, արտահագուստի տոգորանյութի վերականգնման և վնասազերծման սենքերի կազմը և մակերեսը պետք է սահմանվեն նախագծի տեխնոլոգիական մասում՝ հաշվի առնելով դրա մշակման սանիտարական պահանջները:

**100.** Կենցաղային շենքերում երկրաչափական հարաչափերը, առանցքների և սարքավորումների շարքերի միջև ու անցումների լայնության նվազագույն հեռավորությունները պետք է ընդունել ըստ աղյուսակ 4 -ի:



Անվանումը	Ցուցանիշ, մ
<b>Չափերը հատակագծում</b>	
<p><i>Խցիկներ.</i></p> <ul style="list-style-type: none"> <li>- ցնցուղարանների՝ փակ</li> <li>- ցնցուղարանների՝ բաց և միջանցիկ անցումներով, կիսացնցուղարանների</li> <li>- կանանց անձնական հիգիենայի</li> <li>- զուգարանների</li> <li>Նստարաններ հանդերձասենյակում</li> <li>Խմելու ջրամատակարարման սարքավորում</li> <li>Պահարաններ հանդերձասենյակում փողոցային և տնային հագուստի համար՝ կախված կլիմայական գոտուց և հատուկ հագուստից ու կոշիկից*.</li> <li>- IIԲ, IIԳ, IIԴ, IIIԲ, IIIԳ, IV</li> <li>- IԳ, IԵ, IIԱ, IIIԱ</li> <li>- IԱ, IԲ, IԴ և հաշմանդամություն ունեցող անձանց համար</li> </ul>	<p>1,8 × 0,9 (1,8 × 1,8)</p> <p>0,9 × 0,9 (1,2 × 0,9)</p> <p>1,8 × 1,2 (1,8 × 2,6)</p> <p>1,2 × 0,8 (1,8 × 1,65)</p> <p>0,3 × 0,8 (0,6 × 0,8)</p> <p>0,5 × 0,7</p> <p>0,25 × 0,5</p> <p>0,33 × 0,5</p> <p>0,4 × 0,5</p>
<b>Բարձրության չափերը</b>	
<p>Բաժանիչ միջնապատեր.</p> <ul style="list-style-type: none"> <li>- մինչև միջնապատի վերևը</li> <li>- հատակից մինչև միջնապատի ներքևը</li> <li>Հագուստի պահման պահարաններ</li> </ul>	<p>1,8</p> <p>0,2</p> <p>1,65</p>
<b>Հեռավորությունը սանիտարական սարքերի առանցքների միջև</b>	
<p>Լվացարաններ մեկտեղանոց</p> <p>Ձեռքի և ոտքի լոգարաններ, միզակոնքեր</p>	<p>0,65</p> <p>0,7</p>
<b>Շարքերի միջև միջանցքների լայնությունը</b>	
<p>Ցնցուղարանների փակ խցիկներ, լվացարաններ խմբային</p> <p>Բաց ցնցուղարանների և զուգարանների խցիկներ, միզակոնքեր</p> <p>Լվացարաններ մեկտեղանոց</p> <p>Ձեռքի և ոտքի լոգարաններ, կանանց անձնական հիգիենայի և ֆոտարիումի խցիկներ</p> <p>Հանդերձարանի հագուստի պահման պահարաններ՝ շարքի</p> <p>մեջ բաժանմունքների քանակի դեպքում.</p> <ul style="list-style-type: none"> <li>- մինչև 18</li> <li>- 18-ից մինչև 36</li> </ul>	<p>1,2 (1,8)</p> <p>1,5 (1,8)</p> <p>1,8</p> <p>2</p> <p>1,4/1 ** (2,4/1,8)</p> <p>2/1,4 ** (2,4/1,8)</p>
<p>* Արտահագուստի սովորական կազմի համար (խալաթներ, զոգնոցներ, թեթև կոմբինեզոններ) պետք է նախատեսել հատակագծում 0.25 × 0.5 մ չափերով զգեստապահարաններ, ընդլայնված կազմի համար (սովորական կազմ, գումարած ներքնազգեստ, անհատական պաշտպանիչ միջոցներ)՝ 0.33 × 0.5 մ , ծանրաքաշ արտահագուստների համար (ընդլայնված կազմ, գումարած կիսամուշտակներ, ճութավոր կոշիկներ, հատուկ կոմբինեզոններ)՝ 0.4 × 0.5 մ:</p>	

**\*\* Հայտարարում բերված է առանց նստարանների պահարանների շարքերի անցումների միջև լայնությունը:**

**Ծանոթագրություններ:**

1. Պատի և սարքավորումների շարքերի միջև անցումների լայնությունը պետք է կրճատել 40%-ով, շարքի մեջ սարքավորումների վեց միավորից ավելի դեպքում՝ ավելացնել 25%-ով:

2. Զգեստապահարանների միջև փակուղային միջանցքների դեպքում շարքում բաժանմունքների թիվը պետք է կրճատել 35%-ով:

3. Փակագծերում նշված են հենաշարժական խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց համար ցուցանիշները:

**101.** Կենցաղային սպասարկման ձեռնարկությունների շենքերի նախագծման դեպքում անհրաժեշտ է նախատեսել կրող կառուցվածքների մեծ քայլեր և թռիչքներ, որոնք կապահովեն սենքերի փոխակերպման հնարավորությունը և տարբեր տեսակի ձեռնարկությունների տեղակայումը, սենքերի ճկուն հատակագծումը, ինչպես նաև ձեռնարկությունների վերապրոֆիլավորումը կենցաղային ծառայությունների այլ տեսակների՝ հաշվի առնելով փոփոխվող շուկայական իրավիճակը:

**102.** Սանիտարական-կենցաղային սենքերի կազմում պետք է ընդգրկվեն հանդերձարանները, հանգստի սենյակները, ցնցուղարանները, լվացարանները, սանհանգույցները, ծխարանները, կիսացնցուղների տեղակայման տեղերը, խմելու ջրամատակարարման սարքերը, ջեռուցման կամ սառեցման, արտահագուստի վերամշակման, պահպանման և տրամադրման համար սենքերը: Թույլատրվում է ի լրումն նշվածների նախատեսել և այլ սանիտարական-կենցաղային օբյեկտներ և սարքավորումներ:

**103.** Արտադրությունում անմիջականորեն զբաղված աշխատողների համար սանիտարակենցաղային սենքերը պետք է նախագծվեն արտադրական գործընթացների խմբերի հաշվառմամբ՝ համաձայն 5-րդ աղյուսակի:

**Աղյուսակ 5**

Արտադրական գործընթացների խումբ	Արտադրական գործընթացների սանիտարական բնութագիրը	Հաշվարկային քանակը (մարդ)		Հանդերձարանի տեսակը, պահարանի բաժանմունքների քանակը 1 մարդու համար	Հատուկ կենցաղային սենքեր և սարքեր
		մեկ ցնցուղի ցանցի համար	մեկ ծորակի համար		
1	2	3	4	5	6
1	Վտանգի 3 -րդ և 4 -րդ դասի նյութերով աղտոտում առաջացնող գործընթացներ.				

1ա	միայն ձեռքի	25	7	Ընդհանուր, մեկ բաժանմունք	
1բ	Մարմնի և արտահագուստի	15	10	Ընդհանուր, երկու բաժանմունք	
1գ	Մարմնի և արտահագուստի, հեռացվող հատուկ լվացող միջոցների կիրառմամբ	5	20	Առանձին, մեկական բաժանմունքով	Քիմմաքրում կամ արտահագուստի լվացում
2	Ջերմության ակնհայտ ավելցուկից կամ օդերևութաբանական անբարենպաստ պայմաններից առաջացող գործընթացներ.				
2ա	կոնվենցիոն ջերմության ակնհայտ ավելցուկի դեպքում	7	20	Ընդհանուր, երկու բաժանմունք	Սառեցման համար սենք
2բ	Ճառագայթային ջերմության ակնհայտ ավելցուկի դեպքում	3	20	Ընդհանուր, երկու բաժանմունք	Սառեցման համար սենք
2գ	կապված արտահագուստի խոնավացման հանգեցնող խոնավության ազդեցության հետ	5	20	Առանձին, մեկական բաժանմունքով	Արտահագուստի չորացում
2դ	մինչև 10°C օդի ջերմաստիճանի դեպքում, ներառյալ բացօթյա աշխատանքները	5	20	Առանձին, մեկական բաժանմունքով	Ջեռուցման և արտահագուստի չորացման սենք
3	1-ին և 2-րդ դասի նյութերով աղտոտում առաջացնող գործընթացներ, ինչպես նաև կայուն հոտի տիրապետող նյութերով.				

3ա	միայն ծեռքի	7	10	Ընդհանուր, մեկ բաժանմունք	
3բ	մարմնի և արտահագուստի	3	10	Առանձին, մեկական բաժանմունքով	Քիմնաքրում, արտահագուստի պահման տեղի արհեստական օդափոխություն, հոտազերծում
4	Արտադրանքի պատրաստման դեպքում մաքրության պահպանման կամ ստերիլության հատուկ պայմաններ պահանջող գործընթացներ	Համապատասխան գերատեսչական նորմատիվ փաստաթղթերի պահանջներին			

**Ծանոթագրություններ:**

1. Արտադրության գործընթացների տարբեր խմբերի նշանների համադրությամբ հանդերձարանների տեսակը, ցնցուղների ցանցի և լվացարանի ծորակների քանակը պետք է նախատեսել ամենաբարձր պահանջներ ունեցող խմբի համար, իսկ հատուկ կենցաղային սենքերը և սարքերը՝ ըստ ընդհանուր պահանջների:
2. 1ա խմբի գործընթացներում ցնցուղարաններ և պահարաններ, 1բ և 3ա խմբերի գործընթացներում պահարանների նստարաններ չեն նախատեսվում:
3. Փոշու և վնասակար նյութերի արտանետման հետ կապված ցանկացած գործընթացի դեպքում հանդերձարաններում պետք է նախատեսվեն շնչառական (աշխատողների ցուցակային թվաքանակի համար), ինչպես նաև փոշեզերծման կամ կոմբինեզոնների վնասազերծման համար սենքեր և սարքավորումներ (հերթափոխի աշխատակազմի թվաքանակի համար):
4. Բլոկ-տարաններից պատրաստված շարժական շենքերում թույլատրվում է նվազեցնել ցնցուղային ցանցերի թիվը մինչև 60%:
5. Վարակիչ և ռադիոակտիվ նյութերի, ինչպես նաև մաշկի միջոցով ազդեցության դեպքում մարդու համար վտանգավոր նյութերի հետ աշխատելիս սանիտարա-կենցաղային սենքերը պետք է նախագծել հաշվի առնելով գերատեսչական նորմատիվ փաստաթղթերի պահանջները:
6. Գերատեսչական նորմատիվ փաստաթղթերին համապատասխան, թույլատրվում է հագուստի բաց պահպանումը, այդ թվում կախիչների վրա:
7. Վնասակար նյութերը պետք է ընդունել համաձայն N2.2-002-05 սանիտարական կանոնների և նորմերի:
8. Հենաշարժական խնդիրներ ունեցող հաշմանդամություն ունեցող անձանց և կույրերի համար մեկ ցնցուղի ցանցի հաշվարկային թիվն ընդունել 3, մեկ ծորակի համար՝ 7, անկախ արտադրական գործընթացների սանիտարական բնութագրերից:

**104.** Սանիտակենցադային սենքերի կազմը պետք է սահմանել հաշվի առնելով N2.2-002-05 սանիտարական կանոններով և նորմերով սահմանված արտադրական գործընթացի աշխատանքի պայմանների հիգիենիկ չափանիշները և կարգը:

**105.** Հանդերձարաններում պահարանների մեջ տնային և հատուկ հագուստի համար բաժանմունքների կամ կախիչների կեռիկների քանակը պետք է ընդունել աշխատողների ցուցակային թվին հավասար, դրսի հագուստի դեպքում՝ երկու հարակից հերթափոխի թվին հավասար:

**106.** Հանդերձարաններին կից անհրաժեշտ է նախատեսել արտահագուստի պահեստներ, հերթապահ անձնակազմի համար սենքեր՝ մաքրման գույքի համար տեղով, կոշիկի մաքրման, սափրվելու, մազերի չորացման համար տեղեր:

**107.** Այն դեպքերում, երբ արտահագուստի մաքրումը կամ վնասագերծումը պետք է կատարվի յուրաքանչյուր հերթափոխից հետո, հանդերձարանների փոխարեն պետք է նախատեսել արտահագուստի տրամադրման տեղ:

**108.** Պատերը, ցնցուղարանների և նախացնցուղարանների միջնորմները, ինչպես նաև աշխատանքային հագուստի չորացման, վնասագերծման, փոշեգերծման սենքերը պետք է երեսպատվեն խոնավադիմացկուն նյութերով, առաստաղները ներկվեն խոնավադիմացկուն ներկերով, իսկ հատակը պատրաստված լինի խոնավադիմացկուն նյութերից:

**109.** Կենցաղային, վարչական և արտադրական բարձրահարկ շենքերում սանհանգույցներ պետք է լինեն յուրաքանչյուր հարկում:

**110.** Մուտքը դեպի սանհանգույց պետք է նախատեսել ինքնափակվող դռնով նախամուտքի միջով:

**111.** Տղամարդկանց զուգարաններում, գերատեսչական նորմերին համապատասխան, արմունկային անհատական միզանոթի փոխարեն թոյլատրվում է օգտագործել պատի վազումով:

**112.** Լվացարանները և ձեռքի վազման միջոցները պետք է տեղադրվեն սանիտարական սենքերին հարակից սենյակներում:

**113.** Արտահագուստի, իսկ մշտական բնակության վայրից դուրս շինարարության բանվորների ժամանակավոր կեցության դեպքում՝ ներքնագգեստի, անկողնային սպիտակեղենի վազքը դրանց կենտրոնացված առաքմամբ պետք է ապահովվի ստացիոնար կամ շարժական տիպի վազքատներով՝ անկախ աշխատողների թվից:

**114.** Արտահագուստի, կոշիկի վերանորոգման համար սենքերի կազմը և մակերեսը, ինչպես նաև դրանց սարքավորումները սահմանվում են՝ հաշվի առնելով աշխատատեղերի թիվը, աշխատանքների ծավալը:

**115.** Սանիտարա-կենցաղային սենքերում մեկ մարդու համար նախատեսված սենքերի մակերեսի, սարքավորումների միավորի, մեկ միավոր սարքավորումներ սպասարկող աշխատողների հաշվարկային թվի նորմերը պետք է ընդունել ըստ աղյուսակ 6-ի:

**Աղյուսակ 6**

Անվանումը	Ցուցանիշը, մ <sup>2</sup>
<b>Սենքերի մակերեսը 1 մարդու համար</b>	
Դրսի հագուստի հանդերձարաններ, արտահագուստի բաշխման տեղեր*, ջեռուցման կամ սառեցման սենքեր	0,01

Արտահագուստի պահպանման պահեստներ (խորդանոցներ)**.	
- արտահագուստի սովորական կազմի դեպքում	0,04
- արտահագուստի ընդլայնված կազմի դեպքում	0,06
- ծանրաքաշ արտահագուստի դեպքում	0,08
Շնչառական սենքեր	0,07
Արտահագուստի անհատական պաշտպանիչ միջոցների կենտրոնացված պահեստի սենքեր.	
- պահպանման համար	0,06
- բաշխման համար, ներառյալ չափելու և հարմարեցնելու համար խցիկները	0,02
Հերթապահ անձնակազմի սենքեր՝ մաքրման գույքի համար տեղով, զուգարաններին կամ հանգստի սենքերին կից ծխասենյակներ	0,02
Կոշիկի մաքրման, սափրվելու, մազերի չորացման տեղեր	0,01
Արտահագուստի չորացման, փոշեզերծման կամ վնասազերծման սենքեր	0,15
Արտահագուստի, ներառյալ սաղավարտների և հատուկ կոշիկների մաքրման սենքեր	0,3
Բաց և միջանցիկ անցումով ցնցուղարանների խցիկներին կից նախացնցուղարաններ	0,7
Խցիկներով զուգարաններին կից նախամուտքեր	0,4
<b>Հերթափոխում մեկ միավոր սարքավորումներ սպասարկողների թիվը, մարդ</b>	
Հատակային թասեր (զուգարանակոնքեր) և զուգարանների միզանոթներ.	
- արտադրական շենքերում	18/12
- վարչական շենքերում	45/30
- ժողովների, խորհրդակցությունների դահլիճներին, հանդերձարաններին, ճաշարաններին կից	100/60
Լվացարաններ և էլեկտրական սրբիչներ զուգարանների նախամուտքերում.	
- արտադրական շենքերում	72/48
- վարչական շենքերում	40/27
Խմելու ջրի մատակարարման սարք՝ կախված արտադրական գործընթացների խմբերից.	
2a , 2б	100
1a, 1б, 1в, 2в, 2г, 3a, 3б, 4	200
Կիսացնցուղարաններ	15
* Նախատեսել առանձին սենքներ մաքուր և աղտոտված արտահագուստի համար:	
** 1c, 2c, 2d, 3b արտադրական գործընթացների խմբերի համար:	
<b>Ծանոթագրություններ:</b>	
1. I կլիմայական շրջանում և IIԱ և IIIԱ ենթաշրջաններում, ինչպես նաև	

ինքնասպասարկման դեպքում փողոցային հագուստի հանդերձարանների մակերեսը պետք է ավելացվի 25%-ով:

2. Արտահագուստի բաշխման, չորացման, փոշեզերծման և վնասազերծման սենքերում պետք է լրացուցիչ նախատեսել 0.1 մ<sup>2</sup>/մարդ մակերեսով հագուստը փոխելու տեղ, իսկ փողոցային հագուստի հանդերձարաններում և արտահագուստի պահպանման պահեստներում (խորդանոցներում)՝ 0,03 մ<sup>2</sup>/մարդ մակերեսով արտահագուստի բաշխման և ստացման համար տեղեր:

Ավելի քան 500 մարդու դեպքում շնչառական սենքերին կից պետք է նախատեսել 0.05 մ<sup>2</sup>/մարդ մակերեսով արհեստանոցներ՝ շնչառական օրգանների անհատական պաշտպանության սարքերի ստուգման և լիցքավորման համար:

3. Աղյուսակ 5-ում նշված սենքերի մակերեսը պետք է լինի առնվազն 4 մ<sup>2</sup>, նախացնցուղարանների և նախամուտքների մակերեսը՝ առնվազն 2 մ<sup>2</sup>:

4. Համարիչով բերված են տղամարդկանց, հայտարարում կանանց համար ցուցանիշները:

5. Հաշվարկայինից պակաս սպասարկվողների թվաքանակի դեպքում պետք է ընդունել մեկ միավոր սարքավորում:

6. Բազմոց-սայլակ օգտագործող հաշմանդամություն ունեցող աշխատողների առկայության դեպքում սենքի մակերեսը սարքավորումների մեկ միավորի համար պետք է ընդունել. ցնցուղարանի խցիկներին կից նախացնցուղարան՝ 1.0 մ<sup>2</sup>, խցիկներով զուգարաններին կից նախամուտքեր՝ 0.6 մ<sup>2</sup>:

**116.** Ձեռնարկությունների շենքերի նախագծման դեպքում պետք է նախատեսել առողջապահական կետեր, բուժկետեր, կանանց անձնական հիգիենայի համար սենքեր, շոգեբաղնիքներ (սաունաներ), նաև թույլատրվում է նախատեսել ինհալյատորիաների, ֆոտարիումների, ձեռքի և ոտնաթաթի լոգանքների համար նախատեսված սենքեր, ինչպես նաև աշխատանքային ժամերին հանգստի և հոգեբանական բեռնաթափման համար սենքեր:

**117.** Խոշոր արտադրական ձեռնարկությունների վարչական-կենցաղային շենքերի կազմում կարող են նախատեսվել հիվանդանոցներ, պոլիկլինիկաներ (պոլիկլինիկաների բաժանմունքներ), առողջարան-պրոֆիլակտորիաներ, շտապ օգնության կայաններ և այլ բժշկասանիտարական ծառայություններ, ինչպես նաև մարզաառողջարարական շենքեր ու շինություններ: Ընդ որում, պետք է հաշվի առնվի ձեռնարկությունների խմբի կողմից դրանց կոոպերացված օգտագործման հնարավորությունը, իսկ քաղաքային կառուցապատման մեջ կամ բնակավայրերում տեղաբաշխման դեպքում՝ նաև բնակչության կողմից դրանց օգտագործման հնարավորությունը:

**118.** Տեղական առողջապահական մարմինների հետ համաձայնեցմամբ ինհալյատորիաները պետք է կիրառվեն արտադրական այն գործընթացներում, որոնք կապված են գրգռիչ ազդեցությամբ փոշու կամ գազի արտանետման հետ:

**119.** Ըստ թվաքանակի միջին օբյեկտներում (50-250) թույլատրվում է նախատեսել բժշկական կետեր, խոշոր օբյեկտներում՝ ֆելդշերական կամ բժշկական առողջապահական կետեր, ինչպես նաև առողջարարական համալիրներ:

**120.** Աշխատողների 50-ից մինչև 250-ի ցուցակային թվաքանակի դեպքում անհրաժեշտ է նախատեսել բժշկական կետ: Բժշկական կետի տարածքը պետք է

ընդունել 12 մ<sup>2</sup> 50 -ից մինչև 150 ցուցակային թվաքանակի դեպքում, 18 մ<sup>2</sup> 151 -ից մինչև 300: Այն ձեռնարկություններում, որտեղ նախատեսվում է հաշմանդամություն ունեցող անձանց աշխատանքի օգտագործման հնարավորությունը, բժշկական կետի մակերեսը պետք է ավելացնել 3 մ<sup>2</sup>-ով:

**121.** Ֆելդշերական առողջապահական կետի կազմը և մակերեսը պետք է ընդունել ըստ աղյուսակ 7-ի:

**Աղյուսակ 7**

<b>Ֆելդշերական առողջապահական կետի սենքերը</b>	<b>Մակերեսը, մ<sup>2</sup></b>	
Նախասրահ-սպասասրահ՝ հանդերձարանով և գրանցման տեղ	18	(10)*
Հիվանդների ժամանակավոր մնալու սենյակ	9	(9)
Պրոցեդուրային կաբինետ	24	(2 սենք)
Հիվանդների ընդունման կաբինետ	12	(10)
Ֆիզիոթերապիայի կաբինետ	18	-
Ատամնաբույժի կաբինետ	12	-
Գինեկոլոգի կաբինետ	12	-
Դեղամիջոցներ և բժշկական սարքավորումների պահեստարան	6	(6)
Զուգարան լվացարանով՝ նախամուտքում	1 զուգարանակոնքի համար	1 զուգարանակոնքի համար

\* Փակագծերում՝ շարժական շենքերի համար:

**Ծանոթագրություններ:**

1. Ատամնաբույժի կաբինետը պետք է նախատեսել տեղական առողջապահական մարմինների հետ համաձայնեցմամբ :

2. Գինեկոլոգի մեկ կաբինետը պետք է նախատեսված լինի 1200-ից մինչև 3600 կնոջ սպասարկելու համար: Գինեկոլոգի կաբինետի առկայության դեպքում անհրաժեշտ է նախատեսել կանանց անձնական հիգիենայի սենք:

**122.** Բժշկական առողջապահական կետերի սենքերի կազմը և մակերեսը պետք է ընդունել ըստ աղյուսակ 8-ի:

**Աղյուսակ 8**

<b>Բժշկական առողջապահական կետերի սենքեր</b>	<b>Մակերեսը, մ<sup>2</sup></b>		
	<b>առողջապահական կետերի դասի դեպքում</b>		<b>շարժական շենքերում առողջապահական կետերի տեղակայելու դեպքում</b>
	<b>I</b>	<b>II</b>	
Նախասրահ սպասման և	24	18	15



գրանցման տեղերով			
Վիրակապման՝ թարախային և մաքուր	36 (2 սենք)	36 (2 սենք)	16
Հիվանդների ընդունման կաբինետներ	48 (4 սենք)	24 (2 սենք)	12
Ֆիզիոթերապիայի կաբինետ	24	18	12
Ատամնաբույժի կաբինետ	24 (2 սենք)	12	12
Պրոցեդուրային կաբինետ	18	12	-
Հիվանդների ժամանակավոր կեցության սենյակ	12	9	9
Առողջապահական կետի վարիչի կաբինետ	9	9	-
Գինեկոլոգի կաբինետ*	12	9	-
Դեղամիջոցների պահեստ՝ կրակով	9	9	6
Ավտոկլավի և վիրակապման նյութերի համար սենք	9	9	6
Բժշկական սարքավորումների պահեստարան	6	6	6
Զուգարան լվացարանով՝ նախամուտքում	1 զուգարանակոնքի համար		
Յնցուղարան	1 ցնցուղային ցանցի համար		
<p>* Համաձայն 6 -րդ աղյուսակի 2-րդ ծանոթագրության:</p> <p><b>Ծանոթագրություն:</b></p> <p>Այն ձեռնարկություններում, որտեղ նախատեսվում է հաշմանդամություն ունեցող անձանց աշխատուժի օգտագործում, բժշկական առողջապահական կետի կազմը կարող է համալրվել տեղական առողջապահական մարմինների հետ համաձայնությամբ՝ հաշվի առնելով հաշմանդամության տեսակը, հիվանդությունների խմբերը և աշխատողների աշխատունակության կորստի աստիճանը:</p>			

123. Բժշկական կետերի տեղակայման վայրը պետք է նախատեսել հաշվի առնելով հիվանդ և թուլացած աշխատողների անարգել և արագ հասանելիության ապահովումը:

124. Ֆոտարիումները պետք է նախատեսել ստորգետնյա աշխատանքների դեպքում, առանց բնական լուսավորության կամ թույլ գործակցով բնական լուսավորության սենքերում աշխատանքների դեպքերում:

125. Ձեռքի և ոտքի լոգարանները պետք է նախատեսել ձեռքերին և ոտքերին փոխանցվող թրթռման (վիբրացիայի) հետ կապված արտադրական գործընթացներում:

126. Աշխատանքային ժամերին հանգստի սենքերը ու տեղերը, ինչպես նաև հոգեբանական բեռնաթափման սենքերը պետք է տեղակայել ամենօրյա հագուստի հանդերձարաններին կից և առողջապահական կետերում:

127. Հանգստի և հոգեբանական բեռնաթափման համար նախատեսված սենքերում համապատասխան հիմնավորման դեպքում կարող են նախատեսվել հատուկ տոնուսավորող ըմպելիքների պատրաստման և բաշխման սարքեր, ինչպես նաև ֆիզկուլտուրայի պարապմունքների տեղեր:

128. Առողջապահական սենքերում մակերեսների նորմերը 1 մարդու համար պետք է ընդունել ըստ աղյուսակ 9-ի:

**Աղյուսակ 9**

Անվանումը	Մակերեսը 1 մարդու համար, մ <sup>2</sup>
Շոգեբաղնիք (սաունա)	0,7
Ինհալատորիա	1,8
Ֆոտարիում	1,5
Աշխատանքային ժամերին հանգստի սենք (տեղ) հոգեբանական օգնության, ֆիզկուլտուրայի և բուսաբուժության	0,9

129. Արտադրական ձեռնարկությունների շենքի ներսում կամ շենքից մոտ հեռավորության վրա աշխատակիցների համար անհրաժեշտ է նախատեսել հանրային սննդի կետ:

130. Արտադրական ձեռնարկությունների շենքեր նախագծելիս պետք է նախատեսել հանրային սննդի սենքեր (օբյեկտներ) ձեռնարկություններում բոլոր աշխատողներին ընդհանուր, դիետիկ, իսկ անհրաժեշտության դեպքում՝ բուժական - կանխարգելիչ սննդով ապահովելու համար:

131. Հանրային սննդի օբյեկտները պետք է նախագծել «Հանրային սննդի կազմակերպություններին ներկայացվող հիգիենիկ պահանջներ» N2-III-4.2-01-2003 սանիտարական կանոնների և հիգիենիկ նորմերի պահանջներին և այլ գործող նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերին համապատասխան:

132. Սննդի կետերը, ճաշարանները և բուֆետները պետք է տեղակայված լինեն վարչական և կենցաղային սենքերից առանձին:

133. Թույլատրվում է նախատեսել սննդի ընդունման սենյակ: Այն պետք է ունենա բավարար մակերես վազարան, ստացիոնար եռացուցիչ, էլեկտրական սալիկ և սառնարան տեղավորելու համար:

134. Հանրային սննդի օբյեկտների պատերը պետք է լինեն հեշտ լվացվող: Պատերի ներքին մակերևույթները և միջնորմները խոհանոցներում ու մթերային սենյակներում պետք է լինեն հարթ, երկարակյաց և ոչ խոնավածուծ:

135. Բազմաֆունկցիոնալ բնակելի շենքերում կարելի է տեղակայել ՀՀ ՇՆ 31-01-2014 նախատեսված սահմանափակ տարողությամբ վարչական և կենցաղային նշանակության սենքեր՝ տեխնոլոգիական գործընթացների և շահագործման պայմանների ավելի պարզ կազմակերպմամբ, որոնք իրենց բնութագրերով չեն վատթարացնում բնակչության կեցության հարմարավետությունը, հրդեհավտանգ չեն, ինչպես նաև չեն հանդիսանում աղմուկի, հոտերի և այլնի աղբյուր:

136. Վարչական և կենցաղային շենքերի այն սենքերի ցանկը, որոնց տեղադրումը թույլատրվում է նկուղային և որմնախարսխային հարկերում, ներառված է հավելված Ա-ում:

### **5.5. Ինժեներական համակարգեր և սարքավորումներ**

137. Ձեռնարկությունների շենքերի և սենքերի համար անհրաժեշտ է ապահովել ջրամատակարարման, կոյուղու, ջրատարերի, հակահրդեհային ջրագծի համակարգեր՝ համաձայն ՀՀՇՆ 40-01.01- 2014 պահանջների:

138. Բնակչության կենցաղային սպասարկման ձեռնարկություններում ջրի որակը պետք է բավարարի խմելու ջրի գործող նորմատիվ փաստաթղթերի պահանջներին:

139. Կենցաղային սպասարկման ձեռնարկությունների ջրամատակարարումը պետք է ներառի տնտեսական-խմելու ջրատարի սառը և տաք ջրի և հակահրդեհային ջրագծի համակարգերը:

140. Տնտեսական-խմելու ջրատարը պետք է ներառի ներանցում շենք, ջրաչափական հանգույց, բաշխիչ ցանց, մոտեցումներ սանիտարական սարքերին, խառնիչներ, փականային և կարգավորող խողովակաշարային ամրաններ: արմատուրներ:

141. Կենցաղային սպասարկման ներկառուցված ձեռնարկությունների ջրամատակարարման հուսալիության ապահովման նպատակով շենքի բնակելի մասի և ձեռնարկությունների համար ջրատարի ներանցումները պետք է նախագծել առանձին:

142. Կախված տնտեսական կարիքների համար տաք ջրի սպառման ռեժիմից և ծավալից և հանրային սննդի կարիքներից, պետք է նախատեսել տաք ջրի կենտրոնացված համակարգ կամ տեղական ջրատաքացուցիչներ:

143. Հակահրդեհային ջրատարի համակարգերի նախագծումը պետք է կատարել գործող նորմատիվ-տեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

144. Տնտեսական-խմելու ջրատարի համակարգում անհրաժեշտ ճնշումն ապահովելու համար պետք է նախատեսել ճնշման կարգավորիչների տեղադրում:

145. Սառը և տաք ջրամատակարարման խողովակաշարերում շենքի և հանրային սննդի սենքերի ճյուղավորման ներանցումների վրա պետք է տեղադրել ջրի հաշվիչներ, որոնց հարաչափերը պետք է համապատասխանեն ՀՀՇՆ 40-01.01-2014 պահանջներին: Վարչական և կենցաղային շենքերի առանձին սենքերի ճյուղավորումներում թույլատրվում է տեղադրել ջրի հաշվիչներ:

146. Կենցաղային և արտադրական կոյուղու ցանցը պետք է նախագծել առանձնացված: Ընդ որում հասարակական սննդի սենքերի կենցաղային կոյուղու ցանցերը չեն կարող միավորվել վարչական և կենցաղային շենքերի կենցաղային կոյուղու ցանցերի հետ:

**147.** Կենցաղային սպասարկման ձեռնարկությունների սենքերով չի թույլատրվում շենքի բնակելի մասը մատակարարող սառը և տաք ջրի ջրատարի բաշխիչ մայրուղիների և կանգնակների անցկացումը:

**148.** Շենքերի և սենքերի ջեռուցման և օդափոխության համակարգերի նախագծման դեպքում պետք է հետևել ՀՀՇՆ IV-12.02.01-04 պահանջներին:

**149.** Ներհոսային օդափոխության միասնական համակարգով թույլատրվում է ապահովել բոլոր սենքերը, բացառությամբ կոնֆերանս-դահլիճների, կինոխցիկների և կուտակիչախցիկների, որոնցից յուրաքանչյուրի համար անհրաժեշտ է նախատեսել ներհոսային օդափոխության ինքնուրույն համակարգեր: Ինքնուրույն արտաձիգ օդափոխության համակարգեր պետք է նախատեսել նաև.

- ա) սանհանգույցների և ծխարանների համար,
- բ) աշխատանքային սենքերի, կաբինետների և այլնի համար,
- գ) հասարակական սննդի ձեռնարկությունների սենքերի համար,
- դ) արտադրական-տեխնիկական նշանակության և պահեստային սենքերի համար:

**150.** Աղբատարը պետք է սարքավորած լինի պարբերական լվացման, մաքրման, ախտահանման և բեռնախցիկի սրսկման համար նախատեսված սարքով:

**151.** Աղբատար խողովակը պետք է լինի օդաանթափանց և ձայնամեկուսացված շինարարական կառուցվածքներից: Նա չպետք է հարի մարդկանց մշտական ներկայությամբ ծառայողական սենքերին:

**152.** Աղբահահավաք խցիկը չի թույլատրվում տեղակայել մարդկանց մշտական ներկայության կամ նրանց հարակից սենքերի տակ:

**153.** Աղբահահավաք խցիկում ջրատարի ցանցի վրա պետք է տեղադրել սրսկիչ ցողացիրներ: Խցիկից ելքը պետք է լինի անմիջապես դուրս: Ելքի վրա պետք է նախատեսել ոչ դյուրավառ նյութերից հովար:

**154.** Կառավարման խոշոր հաստատություններում, գիտահետազոտական ինստիտուտներում, նախագծային և կոնստրուկտորական, ինչպես նաև բարձր սանիտարահիգիենիկ պահանջներով հաստատությունների շենքերում պետք է նախատեսել փոշու հավաքման կենտրոնացված կամ համակցված վակուումային համակարգ:

**155.** Հիմնարկությունների շենքերում պետք է նախատեսել էլեկտրասարքավորումներ, էլեկտրալուսավորություն, քաղաքային հեռախոսակապի սարքեր, ինտերնետ և հեռուստատեսություն, հրդեհային տագնապի ավտոմատ համակարգեր, գազահազանգման համակարգ, ծխի և հեղեղման ազդարարման սարքեր, ինժեներական սարքավորումների ավտոմատացման և դիսպետչերացման համակարգ, ինչպես նաև ցածր լարման համալիր ցանց՝ էլեկտրամատակարարման և էլեկտրասարքավորման վերաբերյալ «Սպառողների էլեկտրատեղակայանքների տեխնիկական շահագործման կանոններ» տեխնիկական կանոնակարգի պահանջներին համապատասխան:

**156.** Հատուկ պահանջների անհրաժեշտության դեպքում համալիրները և առանձին կանգնած շենքերը կամ սենքերը կարող են սարքավորվել տեղական (ներքին) հեռախոսային կապի սարքերով, հեռուստատեսային, ինտերնետային, ձայնասփռման, ձայնի ուժգնացման և միաժամանակյա թարգմանության, ժամանակի ազդանշանային կայանքներով:

**157.** Շենքերի էլեկտրատեխնիկական սարքերը պետք է նախագծել «էլեկտրակայանքների շահագործման անվտանգության կանոններ» տեխնիկական կանոնակարգին համապատասխան:

**158.** Շենքերի շանթապաշտպանությունը պետք է կատարվի հաշվի առնելով հեռուստատեսային ավեհավաքների և հեռախոսային ցանցի խողովակականգնակների առկայությունը՝ շանթապաշտպան սարքերի վերաբերյալ «էլեկտրական էներգիայի հաղորդաբաշխման վերաբերյալ» տեխնիկական կանոնակարգին համապատասխան:

**159.** Հաստատությունների շենքերի գազամատակարարման համակարգը պետք է նախագծել ՀՀՇՆ IV-12.03.01-2004 պահանջներին համապատասխան:

### **5.6. Մատչելիությունը բնակչության սակավաշարժ խմբերի համար**

**160.** Վարչական և կենցաղային շենքերի, սենքերի նախագծման և կառուցման ժամանակ պետք է ապահովել դրանց հասանելիությունը սակավաշարժ աշխատակիցների և այցելուների համար՝ համաձայն ՀՀԿՀ 23-101-2017 պահանջների:

**161.** Եզրաքարերի թեքահարթակները հետիոտն անցումներում պետք է լիովին տեղակայվեն հետիոտների համար նախատեսված գոտու սահմաններում և չպետք է դուրս գան երթևեկելի մաս:

**162.** Քայլուղիների, մայթերի և թեքահարթակների ծածկույթը պետք է լինի կոշտ նյութերից, հարթ, շոշափողական, առանց արանքների, որոնք շարժման ժամանակ թրթռում (վիբրացիա) չստեղծող, ինչպես նաև սայթաքումը կանխող, որոնք խոնավության և ձյան դեպքում պետք է պահպանեն կոշիկի ներբանի, քայլելու օժանդակ միջոցների հենարանների և թիկնաթոռ-սայլակների անիվների ամուր կցորդումը:

**163.** Շենքեր նախագծելիս պետք է նախատեսել սենք հարմար կերպով մուտք գործելու և սակավաշարժ քաղաքացիների ազատ տեղաշարժի համար հատուկ սարքեր: Անհրաժեշտ է բացառել սենքերի մակարդակների տարբերությունը սակավաշարժ խմբերի շարժման ուղիների վրա: Շենքերի մուտքերում սանդուղքների հետ մեկտեղ անհրաժեշտ է նախագծել թեքահարթակներ, հատուկ դռներ, նախասրահներ և սակավաշարժ խմբերի համար այլ հարմարանքներ:

**164.** Սակավաշարժ անձանց համար աշխատատեղեր ունեցող ձեռնարկություններում կենցաղային բոլոր շենքերում պետք է նախատեսել հորիզոնական, ուղղահայաց հետիոտնային և տրանսպորտային հաղորդակցուղիների համակարգ, ինչպես նաև աշխատողների տվյալ կազմի կողմից դրանց օգտագործման հնարավորությունն ապահովող սարքավորում:

**165.** Շենքերում, որոնց սենքերը գտնվում են առաջին հարկից բարձր և նախատեսված են հենաշարժական և սիրտ-անոթային համակարգի խնդիրներ ունեցող մարդկանց գտնվելու համար, անհրաժեշտ է նախատեսել մարդատար վերելակներ՝ անկախ շենքի հարկայնությունից:

**166.** Ձեռնարկության (հիմնարկի) տարածքի հատակագծումը և դրա սարքավորումը պետք է ապահովվի.

ա) հետիոտն շարժման ուղիների հնարավորինս նվազագույն երկարություն,

բ) տարածքով տեղաշարժի անվտանգություն,

գ) սակավաշարժ խմբերի տեղաշարժի ուղիների վրա խոչընդոտներ ստեղծող տարրերի բացակայություն:

**167.** Տեսողության գործառույթների խանգարումով մարդկանց զբաղվածություն նախատեսող շենքերի հատակագծումը պետք է առավելագույնս պարզ լինի այն հիշելու, տարածության մեջ հեշտ կողմնորոշվելու տեսանկյունից, հետիոտն և տրանսպորտային ուղիները պետք է նախագծվեն ուղղանկյուն սխեմայով:

**168.** Տարածքում չի թույլատրվում տեղաշարժվելիս թիկնաթոռ-սայլակներից օգտվող սակավաշարժ խմբերի և տեսողության գործառույթների խանգարումով մարդկանց հետիոտն ուղիների հատումը բեռնատար հոսքերի հետ: Խոշոր կենցաղային ձեռնարկություններում, որտեղ նման խաչմերուկներում նախատեսված են ստորգետնյա անցումներ, վերջիններս անհրաժեշտ է կահավորել թեքահարթակներով և բազրիքներով:

**169.** Հետիոտն ուղիների, մայթերի և թեքահարթակների թեքություններն ու ուրվաչափերը սակավաշարժ խմբերի տեղաշարժման ուղիների, ինչպես նաև այդ ուղիները անցուղիների հետ հատումը պետք է ապահովեն թիկնաթոռ-սայլակների անվտանգ տեղաշարժը: Հետիոտնուղիների և մայթերի տեղամասերը, որոնք հարում են անցուղիների հետ դրանց հատման վայրերին, նպատակահարմար է կառուցել ճանապարհի կամ մայթի այլ հատվածներից տարբերվող ծածկույթի մակատեսքային մակերևույթով:

**170.** Սակավաշարժ խմբի ներկայացուցչի համար հատուկ աշխատատեղը պետք է ունենա հիմնական և օժանդակ հագեցվածություն, տեխնիկական և կազմակերպչական պարագաներ, որոնք ապահովում են աշխատատեղերի կազմակերպման դեպքում էրգոնոմիկ սկզբունքների իրականացումը և հաշվի են առնում անհատական հնարավորությունները, ինչպես նաև կոնկրետ անձանց սահմանափակ հնարավորությունները: Նպատակահարմար է կիրառել տարբեր մասնագիտությունների համար հատուկ համալիր մշակված սակավաշարժ խմբի ներկայացուցիչների աշխատատեղերը:

**171.** Աշխատատեղի կազմակերպումը, կահույքի բոլոր տարրերի, արտադրական սարքավորումների դիզայնը պետք է համապատասխանեն աշխատողների մարդաչափական, ֆիզիոլոգիական և հոգեբանական առանձնահատկություններին, ինչպես նաև սահմանափակ հնարավորություններին, հաշվի առնելով.

- ա) շարժիչային ապարատի անատոմո-մորֆոլոգիական բնութագրերը,
- բ) կառավարման մարմինների, աշխատանքի առարկաների, գործիքի ճանաչման հնարավորությունները,
- գ) կառավարող գործողությունների իրականացման դեպքում շարժումների ճշգրտությունը, արագությունը և ամպլիտուդները,
- դ) գործիքների, աշխատանքի առարկաների բռնելու և տեղափոխելու հնարավորությունները (մատներով, դաստակով, ամբողջ ձեռքով, ոտնաթաթով, այդ թվում պրոթեզների և դրանց վրա աշխատանքային գլխիկների օգտագործմամբ),
- ե) կառավարող գործողությունների իրականացման ընթացքում զարգացող ջանքերի մեծությունը:

## **5.7. Շրջակա միջավայրի պաշտպանություն**

172. Շենքեր, շինություններ, կառույցներ և այլ օբյեկտներ նախագծելիս պետք է հաշվի առնվեն շրջակա միջավայրի վրա թույլատրելի մարդածին ծանրաբեռնվածության նորմատիվները, նախատեսվեն շրջակա միջավայրի աղտոտումը կանխելու և վերացնելու միջոցառումներ, ինչպես նաև արտադրության և սպառման թափոնների տեղաբաշխման մեթոդներ, կիրառվեն ռեսուրսախնայող, սակավաթափոն, անթափոն և այլ լավագույն տեխնոլոգիաները, որոնք կնպաստեն շրջակա միջավայրի պահպանությանը և բնական միջավայրի վերականգնմանը:

173. Շենքերը, սենքերը պետք է նախագծվեն այնպես, որ դրանց կառուցման և շահագործման ընթացքում շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցություն ունենալու վտանգ չառաջանա:

174. Շրջակա միջավայրի վրա ուղղակի կամ անուղղակի բացասական ազդեցություն ունեցող վարչական և կենցաղային շենքերի տեղակայումը, նախագծումը, շինարարությունը, վերակառուցումը, շահագործումը, կոնսերվացումն ու լուծարումը իրականացվում են շրջակա միջավայրի պահպանության բնագավառում նորմատիվ փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

175. Շենքերի, շինությունների, սենքերի և այլ օբյեկտների շահագործման հանձնումն իրականացվում է նախագծային փաստաթղթերով նախատեսված շրջակա միջավայրի պահպանության միջոցառումների ամբողջ ծավալով կատարման պայմանով:

176. Արտադրության և սպառման թափոնները, այդ թվում ռադիոակտիվ թափոնները, ենթակա են հավաքման, օգտագործման, վնասազերծման, փոխադրման, պահպանման և թաղման, որոնց պայմանները և եղանակները պետք է անվտանգ լինեն շրջակա միջավայրի համար:

## **6. ԷՆԵՐԳԱԽՆԱՅՈՂՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՌԵՍՈՒՐՍՆԵՐԻ ՌԱՅԻՈՆԱԼ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄ**

### **6.1. Էներգոսպառման կրճատման պահանջներ**

177. Շենքերի ինժեներական համակարգերը պետք է ունենան օդի ջերմաստիճանի ավտոմատ կամ մեխանիկական կարգավորում: Շենքի ջեռուցման համակարգերերում պետք է օգտագործել միայն էներգաարդյունավետ սարքավորումներ: Համակարգերը պետք է սարքավորված լինեն ոչ աշխատանքային ժամերին պահանջվող ջերմային հոսքը նվազեցնելու համար: Սառը և տաք ջրի, էլեկտրաէներգիայի, գազի և ջերմության կենտրոնացված մատակարարման դեպքում պետք է տեղադրվեն էներգիայի, ջրի, գազի և այլն ծախսի հաշվառման սարքեր:

178. Շենքերը նախագծելիս պետք է հաշվի առնել ՀՀՇՆ 24-01-2016 պահանջները: Դրանք պետք է նախագծվեն այնպես, որ շենքի էներգետիկ ծախսը լինի նվազագույն մակարդակի վրա՝ շահագործման ողջ ընթացքում արդյունավետ գործելու համար:

179. Լուսավորման համակարգի արդյունավետ օգտագործումը պետք է կատարվի համապատասխան հարաչափերի ստեղծման միջոցով, ինչպիսիք են առաստաղի, պատուհանների բարձրությունը, սենքի մակերևույթի գույնը և արտացոլման ունակությունը:

**180.** Սենքի լուսավորության համար պետք է օգտագործել ՀՀՇՆ 22-03-2017 պահանջները բավարարող էներգախնայող լամպեր և լուսատուներ:

**181.** Էլեկտրաէներգիայի ծախսի նվազեցման համար անհրաժեշտ է օգտագործել էներգաարդյունավետության բարձր դաս ունեցող սարքավորումներ:

**182.** Հաշվի առնելով այն բնակլիմայական պայմանները, շենքերում ներքին միկրոկլիմայի պահանջները և ծախսարդյունավետությունը, որոնք պետք է պահպանվեն նախագծման, կառուցապատման և շահագործման ընդունման փուլերում՝ նպատակ ունենալով նաև սահմանափակել շրջակա միջավայրի վնասակար նյութերի և ջերմոցային գազերի արտանետումները, շենքերում էներգախնայողության և էներգաարդյունավետության գործընթացի հետ կապված հարաբերությունները՝ պետք է համապատասխանեն «Նոր կառուցվող բնակելի բազմաբնակարան շենքերում, ինչպես նաև պետական միջոցների հաշվին կառուցվող (վերակառուցվող, նորոգվող) օբյեկտներում էներգախնայողության և էներգաարդյունավետության» տեխնիկական կանոնակարգի պահանջներին:

## **6.2. Բնական ռեսուրսների ռացիոնալ օգտագործում**

**183.** Շենքերը պետք է նախագծվեն, կառուցվեն և շահագործվեն այնպես, որ բացառվի բնական պաշարների ոչ ռացիոնալ ծախսը:

**184.** Տարածքները նախագծելիս պետք է նվազագույնի հասցնել բուսականության հատման գոտիները:

**185.** Տնտեսական կարիքների համար պետք է օգտագործել երկրորդային, մաքրված ջուր:

**186.** Բուսականությունը հեղեղային ջրով ոռոգելու դեպքում թույլատրվում է նախատեսել ջրամբար:

**Հավելված Ա**  
(պարտադիր)

## **Ց Ա Ն Կ**

**Վարչական և կենցաղային շենքերի սենքերի, որոնց տեղադրումը թույլատրվում է նկուղային և որմնախարսխային հարկերում**

### **Ա.1. Նկուղային հարկ**

Նկուղային հարկերում տեղադրում են.

- 1) օդափոխման և օդորակման խցիկներ,
- 2) ջրատար և կոյուղու պոմպակայաններ,
- 3) կաթսայատներ,

4) կառավարման հանգույցներ և շենքերի ինժեներական ու տեխնոլոգիական սարքավորումների տեղադրման և կառավարման համար նախատեսված այլ սենքեր,



- 5) վերելակների մեքենայական բաժանմունքներ,
- 6) հանդերձարաններ, ցնցուղարաններ, նախացնցուղարաններ, վացարաններ, զուգարաններ,
- 7) կանանց անձնական հիգիենայի սենքեր,
- 8) Վ3, Վ4 և Դ կատեգորիաների մառանային և պահեստային սենքեր (բացառությամբ դյուրավառ և այրվող հեղուկների ու գազերի պահպանման համար սենքերի), արտահագուստի պահպանման կամ տրամադրման, շնչառական սենքեր,
- 9) հասարակական սննդի ձեռնարկությունների կենցաղային սենքեր, իսկ հատուկ հիմնավորման դեպքում՝ արտադրական սենքեր և այցելուների համար նախատեսված սենքեր,
- 10) աշխատանքի պաշտպանության և հրդեհային անվտանգության կարհիներտներ,
- 11) արտահագուստի վացքատներ, քիմիական մաքրման, արտահագուստի ներծծման վերականգնման (բացառությամբ դյուրավառ և այրվող հեղուկների օգտագործմամբ տեխնոլոգիական գործընթացների), արտահագուստի վնասազերծման (բացառությամբ դյուրավառ և դյուրավառ հեղուկների օգտագործմամբ տեխնոլոգիական գործընթացների), փոշեզերծման, չորացման և արտահագուստի վերանորոգման սենքեր,
- 12) ֆոտոպատճենավորման, կինոֆոտոլաբորատորիաների սենքեր,
- 13) ռադիոհանգույցներ,
- 14) էլեկտրավահանային,
- 15) սպորտային մարզասարքերի սրահներ,
- 16) ֆիզիկական կուլտուրայի համար նախատեսված սենքեր:

## **Ա.2. Որմնախարսխային հարկ**

Որմնախարսխային հարկերում տեղադրում են.

- 1) բոլոր այն սենքերը, որոնց տեղադրումը թույլատրվում է նկուղային հարկերում,
- 2) անցաթղթային բյուրո, տեղեկատուներ.
- 3) ծառայողական և գրասենյակային սենքեր,
- 4) լողավազաններ,
- 5) պատճենահանող-բազմացնող ծառայությունների և լուսապատճենավորման սենքեր,
- 6) շոգեբաղնիք (սաունա):

**ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ**  
**«ՀՀՇՆ 31-03-03- «ՎԱՐՉԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՇԵՆՔԵՐ» ՀԱՅԱՍՏԱՆԻ**  
**ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՆՈՐՄԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ**  
**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐԻ 2001**  
**ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի N 82 ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ**  
**ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ՀՀ ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ԿՈՄԻՏԵԻ ՆԱԽԱԳԱՀԻ**  
**ՀՐԱՄԱՆԻ ՆԱԽԱԳԾԻ**

**1. Անհրաժեշտությունը**

Նշված նորմերի մշակման անհրաժեշտությունը պայմանավորված է ՀՀ տարածքում, քաղաքային և գյուղական համայնքներում արտադրական գործունեություն իրականացնող օբյեկտների (արդյունաբերական և գյուղատնտեսական արտադրությունների տեղակայման և դրանց մեջ տեխնոլոգիական սարքավորումների շահագործման համար անհրաժեշտ պայմաններ ապահովող շենքեր շինություններ) վարչական և կենցաղային շենքերի կառուցման և/կամ վերակառուցման (այդ թվում տեխնիկական վերազինման) աշխատանքների, նախագծման, դրանց անվտանգ և մատչելի շահագործման արդյունավետ ընթացքի ապահովման պահանջով, որի համար խորհրդային տարիներին մշակված 2.09.04-87. «Ադմինիստրատիվ և կենցաղային շենքեր» նորմերի կիրառումը այլևս արդիական չէ:

**2. Ընթացիկ իրավիճակը և խնդիրները**

Ներկայումս, արտադրական օբյեկտների վարչական և կենցաղային շենքերի մասով ի հայտ եկած քաղաքաշինական խնդիրները դիտարկվում են ՀՀ

քաղաքաշինության նախարարի 14.10.2014 թվականի «ՀՀՇՆ 30-01-2014 «Քաղաքաշինություն. Քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում » շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 263-Ն և ՀՀ քաղաքաշինության կոմիտեի նախագահի 10.12.2020թ «ՀՀՇՆ 31-03-2018 «Հասարակական շենքեր և շինություններ» շինարարական նորմերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության նախարարի 2001 թվականի հոկտեմբերի 1-ի N 82 հրամանում փոփոխություն կատարելու մասին» N 95-Ն հրամանների շրջանակներում, որոնք պարունակում են ընդամենը ընդհանուր դրույթներ և չեն կարող կարգավորել արտադրական օբյեկտների վարչական և կենցաղային շենքերին վերաբերող քաղաքաշինական խնդիրներն ու դրանց առանձնահատկությունները:

ՀՀ տարածքում ներկայումս գործում են նախկին ԽՍՀՄ շինարարական նորմերը՝ 2.09.04-87. «Աղմինիստրատիվ և կենցաղային շենքեր» , որոնք այլևս արդիական չեն և չեն համապատասխանում ստանդարտացման փաստաթղթերի ազգային համակարգի, քաղաքաշինական, բնապահպանական ու սանիտարական նորմերին:

Հաշվի առնելով վերոգրյալը ՀՀ քաղաքաշինության կոմիտեն ՀՀ 2021 թվականի պետական բյուջեի միջոցների հաշվին նախաձեռնել է «Վարչական և կենցաղային շենքեր» շինարարական նորմերի մշակման գնման գործընթացը: 2021 թվականի հունիսի 21-ի N ՀՀԲԿ-ԳՀԱՇՁԲ-21/33 պետական գնման պայմանագրի համաձայն՝ «Երևաննախագիծ» փակ բաժնետիրական ընկերությանը պատվիրվել են «Վարչական և կենցաղային շենքեր» շինարարական նորմերի մշակման և տեղայնացման աշխատանքները: Աշխատանքների կատարման ժամկետ է սահմանվել 350 օրացուցային օր:

Մշակված փաստաթղթի առաջին և երկրորդ խմբագրությունները սահմանված կարգով ներկայացվել են շահագրգիռ մարմինների և կազմակերպությունների քննարկմանը:

## **2.1 Կապը ռազմավարական փաստաթղթերի հետ**

### **1) ՀՀ կառավարության 2021 թվականի օգոստոսի 18-ի N1363-Ա որոշում**

Հոդված 6.6 ՀՀ հանրապետության բոլոր բնակավայրերում համաչափ և կայուն զարգացում ապահովելու, բնակչության բարեկեցությունը բարելավելու, բնակավայրերն ավելի հարմարավետ ապրելու և գործելու կենսամիջավայր դարձնելու... >

### **2) «Քաղաքաշինության մասին » ՀՀ օրենք**

Համաձայն Հոդված 2-ի՝ «Քաղաքաշինությունը Հայաստանի Հանրապետությունում կենսագործունեության համար բարենպաստ տարածական միջավայրի ստեղծման կամ փոփոխման նպատակով պետության, ֆիզիկական, իրավաբանական անձանց և դրանց միավորումների գործողությունների համախումբ է, որն ընդգրկում է՝ շենքերի, շինությունների նախագծման և շինարարության, վերակառուցման (ներառյալ՝ քանդման), վերականգնման, ուժեղացման, արդիականացման, ինչպես նաև տարածքների բարեկարգման բոլոր տեսակները. »

**3) ՀՀ կառավարության 2021 թվականի ապրիլի 8-ի « ՀՀ քաղաքաշինության բնագավառի ռազմավարական ծրագիրը և ծրագրի իրագործումն ապահովող միջոցառումների ցանկը հաստատելու մասին » N 531-Լ որոշում**

Կետ 14՝ «Արդի պայմաններում քաղաքաշինության քաղաքականությունը ձևավորվում և իրականացվում է համաշխարհային տնտեսության գլոբալիզացման պայմաններում: Տեխնոլոգիական գործընթացները ենթադրում են հասարակության գործունեության և մարդկանց կյանքի կազմակերպման նոր մոտեցումներ, մեծացնում են աղետների սպառնալիքը, հետևաբար՝ անվտանգության պահանջները: Պետության կարևորագույն պարտավորություններից է մարդու կյանքի ու գործունեության անվտանգության իրավունքի ապահովման համար համապատասխան պայմանների ստեղծումը: »

Միաժամանակ հարկ է նշել, որ «Վարչական և կենցաղային շենքեր» շինարարական նորմերը հաստատելու մասին նախագծի ընդունումը լրացուցիչ ֆինանսական միջոցների անհրաժեշտություն և պետական բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չի առաջացնում:

**3. Նախագծի մշակման գործընթացում ներգրավված ինստիտուտները և անձինք**

ՀՀ քաղաքաշինության կոմիտեի աշխատակիցներ, <Երևաննախագիծ> ՓԲԸ

**4. Ակնկալվող արդյունք**

Արդիական նորմատիվ փաստաթղթի մշակման արդյունքում՝ արտադրական օբյեկտների առանձնահատկություններից և արտադրության բնույթից ելնելով կկանոնակարգվի վարչական և կենցաղային շենքերի ծավալահատակագծային և տեխնոլոգիական լուծումների մասով հատուկ մոտեցումներ: